

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Դ.—ՇՐՋԱՆ ԺԴ. 1881 ՏԱՐԻ ԺԴ. ԱՊՐԻԼ 30.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.

Արտաքան Պօղոս Առաքեալը նկեղեցւոյ այս տուրը խորհուրդը ցեղ է անուանում. «խորհո՜ւրդս այս մեծ է»։

Մեծ է արդարեւ, որովհետեւ սա իւր մէջ պարունակում է այն անպրանիկ օրհնութիւնը, որով օրհնեց Աստուած մարդկութեան նախածնօղ եդեմական զոյգ ընտանիքին. որովհետեւ բովանդակում է իւր մէջ այն երջանկութիւնը, որով հաճեցաւ Աստուած երջանկացնել մարդկութիւնը. որովհետեւ Աստուծոյ նախատաճման նպատակի համեմատ ծառայում է մարդկան աճելութեանը, եւ մանաւանդ մեծ է նորա համար, որ այս տուրը խորհրդով զուգաւորուածները կրնան Քրիստի Ս. եկեղեցւոյ հետ միաւորութեան նմանութիւնը, որ գերազանց շնորհ է քրիստոնէի համար։ «խորհո՜ւրդս այս մեծ է», ասում է Առաքեալը, «բայց ես ասե՛մ ի Քրիստոս և յեկեղեցի»։

Բայց անհրաժեշտ է նկատել եւս այս, որ արշալի մեծ է այս ամուսնութեան խորհուրդը, նոյնչափ եւս ցեղ և կարեւոր են սորա շնորհը վայելել ցանկացող քրիստոնէի պարտաւորութիւնները, որոց արդիւնքով կատարողները միայն կատանան յիշեալ Աստուածապարգեւ օրհնութիւնը, երջանկութիւնն ու արբարար շնորհը։

«Ա՛ըէ պէրէկէէ պէանայս յեբ, սրպէս և Քրիստոս պէրեաց պնիեղեցի և պանյն ի-բ տապնեաց վառն նորա»։ Ահա, Քրիստոսի գէպի իւր կինը ունեցած դիտաւորապահութիւնը պէտք է. այս անձնազոհ սիրոյ պայմանով պէտք է քրիստոնեայն վճռէ ընդունել այս աստուածատահման զուգաւորութեան եկեղեցւոյ առաքելական հոգին, ինչպէս երկնաւոր Փեսայ — Քրիստոս ընդունեց իր հարսին — եկեղեցւոյ հետ միաւորութիւնը եւ արդիւնաւորեց գործով Այն քրիստոնեային, որ արտաքոյ այս պայմանի այլապէս ջոջերի — եկեղեցի հանգամանքներից և ծննդեանէ ազգային պայմաններով կընդունի այս առաքելական հոգին, նա կատարեալ արքայական է։

Իսկ ինչի՞ մէջ պէտք է արտայայտուի մարդոյ սէրը դէպի իր կինը — անկասկած նորա հետ և դէպ ի կենցաղավարութեան մէջ։ Մարդը քաջ համոզուած լինելով, որ իւր կինը իրան պարտի պատուել, այլ հաւասար ընկեր, գուգընթաց ուղեկից կեանքի ամէն քաղցր ու դառն հանգամանքների մէջ, պարտական է իր ընտանեկան եւ հասարակական կեանքի մէջ յարգել իւր կնոջ իրաւունքները, չեւտատար իւր անձին հոգալ եւ նորա բարոյական եւ մարմնական պիտոյքները, զգուշանալ նորա դիւրաբեկ սիրտը գառնացնելուց եւ սէրը իրանից պատպանելուց։

Այս այսպէս լինելուց յետոյ բարոյական անհերքելի յանգանք քրիստոնեայ մարդկանց՝ կոպիտ և վայրենի վարմունք ունենալ իրենց կանանց հետ, որոյ Աստուծոյ սեղանն եւ քահանայի առաջ ուխտել են սիրել, սիրել այնպէս, ինչպէս Փրկիչը սիրեց իւր Ս. եկեղեցին, այս, աստուածընդդէմ ուխտապանութիւն է մարդկանց կողմից վայրենաբար վերաբերվիլ դէպի իւրեանց կանայքը, որոց հոգատար, հովանաւոր եւ կեանքի երկրորդ պահապան հրեշտակ լինել ուխտեցին Աստուծոյ առաջ, անհերքելի յանգանք է, այս, մարդկանց կողմից դրժել այդ ուխտին եւ ընդհակառակն նոցա անհոգքելի հարատահարիչը լինել։ «Ա՛ըէ պէրէկէէ պէանայս յեբ, սրպէս և Քրիստոս պէրեաց պնիեղեցի»։

«Պանայէ ի-բեանց սրանց հնազանդ լինին, սրպէս և Տէառն, պէ այր է գլուխ կնոջ, սրպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ . . . Որպէս եկեղեցի հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք ի-բեանց սրանց յամենայնի»։

Ա՛հ եւ կանանց փոխադարձ պարտաւորութիւնը դէպի իւրեանց մարդիկը «ածէն քանի մը հնազանդ լինել ամուսնոց»։ Ընտանեկան կառաւարեալ քաղաքացութիւնը, երկնային սէրն ու խաղաղութիւնը, սոցա հետ միասին եւ Աստուծոյ օրհնութիւնն ու յաջողութիւնը ընտանեկան ամեն գործերի մէջ, կայանում է կանանց դէպի իւրեանց մարդիկը ունեցած հնազանդութեան մէջ, հնազանդութեան, որ բղխած պէտք լինի ոչ սոսկական ցած որից՝ ակամայ, այլ իւր պարտուց քաջ գիտակից եւ վեհանձն սրտից, ոչ ահաճութեամբ, այլ մեծ յօժարութեամբ եւ ուրախութեամբ։

Այս ամուսնական փոխադարձ պարտաւորութիւնները կառարելու գլխաւոր եւ ապահով միջոցներից առաջինն է՝ երկու ամուսինների քաղցր եւ ներողամիտ դիմաւորութեամբ վերաբերմիւնը միմեանց ընդ և պակասաւորը լրացնին։ այս փոխադարձ դիմաւորութիւնը նոյն իսկ սկզբից առաջը կառնու այն անյաւակնութիւնների եւ հակառակութիւնների, որոնք ծագում են շատ անգամ ամենաչնչին առիթներից եւ որոնցից, կարեմ ասել, ապատ չէ ոչ մի ընտանիք։ իսկ երկրորդ միջոցն է փոխադարձ հաւատարմութիւնը։ Աստուծոյ առաջ միմեանց առած փոխադարձ հաւատարմութեան ուխտի մէջ հաստատուն լինել միտչեւ ցմահ։ ահա այն գլխաւոր պայմանը, որ պահանջում է ընտանիքի կառաւարեալ քաղաքացութիւնը։ Ո՛րքան եւ ա՛րքան տարբեր յանցանքներ են գործուել եւ գործուում են ամուսնական անհաւատարմութեան եւ խառնագնացութեան պատճառով։ որքան մարդիկ կորչում են անհաւատարիմ կնոջ ձեռքով։ ո՛րքան՝ իւրեանց ուխտին հաւատարիմ եւ աստուածավախ կանայք հեծում եւ կորչում են անառակ մարդկանց անողորմ հարուածների տակ։ քանի՛ քանի՛ ընտանիք լացով եւ հաւաչանքով գերեզման է իջուցել դա, եւ որքան հարուստ աճպնէք վերջին աստիճանի աղքատութեան է հասուցել, քանի՛ հաղարաւոր մանուկներ անբարոյական եւ հրեշանման ծնօղաց վատ ազդեցութեան տակ վչացել մեռել են թարոյապէս եւ նոյն անբարոյականութիւնը ածանցել իւրեանց սերունդների մէջ։ եւ ա՛ի՛նչ այս ամուսնական անհաւատարմութեան պատճառակից հետեւանքներից մինը չէ ամուսինների միմեանցից բաժան-

ւիլը, ամուսիններուն, որոնք ցմահ անբաժան ընկերակցութիւն կ՚ելլեն ուխտել Աստուծոյ քանդիլ, բաժանիլ Աստուծոյ օրհնութեամբ ամուսնական միաւորութիւնը՝ այդպիսի ամուսիններուն կողմից նշանակուած կամովին արատաւորել իւրեանց անուննիրը, նշանակուած մեզանչել Աստուածային ճշմարտութեան սկզբունքներուն եւ Ս. Եկեղեցւոյ հիմնադիր եւ օրհնագիր Յիսուսի դէմ, որ ամուսիններուն բաժանման առօրինաւորութիւնը ցոյց տալով՝ պատուիրեց «Զոր Աստուած զո՛գեաց, մարդ մի՛ ջնինեսցէ». եւ ոչ այսչափ միայն, այլ այդպիսի օրինազանցներուն դատապարտութեան վճիռ կարգաց ասելով, «Ով արձակէ կինն ի՛ւր առանց պոռնկութեան, նա պատ նմայ ընել. և որ պարձակեալն առնու, շնայ»։

Ընտանիքը, որի մէջ թագաւորում է ամուսնական փոխադարձ սէրն ու հաւատարմութիւնը, երջանկութեան եդեմ է, որ ընծայում է մարդկութեան պիտանի եւ Աստուծոյ հաճոյական բարեկիրթ զաւակներ։ Մշանջենաւորապէս ապահովուած է այն ազգի գոյութիւնը, որը բաղկացած է այսպիսի ընտանիքներից։ Սորանցից են բղխում ամբողջ ազգի յառաջադիմութիւնն ու հարստութիւնը։ Բայց այդպիսի ընտանիքներ ունենալու համար անհրաժեշտ է երկսեռ երիտասարդութիւնը, որ պատրաստուած է լինել նոր սերնդեան հայրեր ու մայրեր, կրթել, դաստիարակել ամուսնական փոխադարձ սիրոյ եւ հաւատարմութեան մէջ, որ կարողանան գնահատել, խնամել իւրեանց կեանքը, ղարդարել զօրան մարմնական եւ բարոյական բարեմասնութիւններով, յարգել իւրեանց մարդկութեան բարձր պատիւը. որ կարողանան ամենայն սրբութեամբ պաշտել ողջախոհութիւնն ու սրբութիւնը եւ այնպէս գովելի նախահայրութեամբ պատրաստուել սուրբ ամուսնութեան չէջ եւ քաջ ծաղկիչ խորհուրդը ընդունելու. այո, նոցա մարմնական եւ բարոյական կրթութիւնից կախուած ունի ապագայ սերունդների մարմնական եւ բարոյական կրթութիւնը։

Ս. Վարդապետ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ։

Մարդուս մէջ սովորաբար տեսնուում երևոյթների երկու կարգ—Բնախօսական և Հոգեբանական։ Ըստ երևութին դրբա հակառակ են թուում Հոգեբանական երևոյթները ժամանակաւոր, հոգևոր և վերացական են։ նոցա մարդս հասու է լինում ինքնաքննութեամբ։ իսկ բնախօսական երևոյթները միշտ կան, նիւթական են, ունին տարածութիւն, և նոցա չէ կարելի հասու լինել ինքնաքննութեամբ։ Ա՛յս երկու երևոյթների այդ տեսակ տեսութիւնից հետևում ա՛յն թէ՝ «հոգին ջրեղ է, իսկ մարմինը ցամաք»։ որով մարդը ներկայացնում միութիւն երկու հակառակ երևոյթների—բնախօսական և հոգեբանական։ Ա՛յլ սխալ հայեցողութիւնից հետևում ա՛յն թէ՝ հոգեբանական և բնախօսական երևոյթները այնպես միմեանցից խիստ կերպով տարբերուած և բաժանուած են, ինչպէս երկինքն երկրից։ Բայց իսկական քննութիւնը ցոյց է տալիս թէ՝ այդ երկու երևոյթները սերտ չաղկապուած են միմեանց հետ այնպէս, որ շատ անգամ դժուար է ասել, որտեղ է վերջանում մէկը և որտեղից սկսուում միւսը։ Մարդն է գործարանաւոր էակ, որի մէջ միանում հոգու և մարմնի հակառակութիւնը։ Ի՛հարկէ կարելի է վերցնել այնպիսի օրինակ, որտեղ դժուար չի լինի որոշել հոգեբանական երևոյթը բնախօսականից, օրինակ, մտածողութեան և մարսողութեան գործողութիւնները, բայց և կարելի է վերցնել այնպիսի օրինակ՝ որտեղ հաշիւ նկատելի է երկուսի սահմանը՝ որտեղ երևում թէ հոգին և մարմինն անմիջապէս մօտենում են միմեանց։

Նախ՝ ցոյց տանք որ՝ մեր հոգեկան գործողութիւնները կատարուում են արտաքին գրգռումներից և որ՝ հոգեբանական գործողութիւններն իրենց սկիզբն առնում են բնախօսականից։ Ով որ քննել է իւր մարքի ընթացքը, նա կհամաձայնի անշուշտ որ՝ մեր մտածողութեան յատկութիւնը և ուղղութիւնը կախուած է այն հանգամանքներից, գործողութիւններից և պատահմունքներից, որոնք շրջապատում են մեզ։ Մարքի ուղղութիւնը շատ անգամ կախուած է մեր տրամադրութիւնից, իսկ տրամադրութիւնը առաջանում մարմնի լաւ և վատ դրութիւնից, հետևաբար բնախօսական պատճառներից։ Նոյն իսկ երբ մարդս մտածում վերացական և երևակայական առարկաների վերայ, այն ժամանակ մինչև անգամ չէ կարելի ասել թէ պատճառը ջղերի գրգռումն չէ, օրինակ, բարձր համարողական (մաթեմատիկական) քնաղանցական հարցերով և երևակայութեամբ պարապելը։

Պէտք ասած որ՝ մեր մտածողութիւնը կատարուում յաջորդաբար օրէնքներով, օրինակ, անգղիացի երևելի գիտնական Հօբբսյ պատմում թէ՝ Անգղիայի ներքին պատերազմի ժամանակ խօսակիցներից մէկը յանկարծ հարցրից թէ՝ Հռոմէական Դիմարիան ո՞րքան աւիժողութիւն ունէր Տիբերիոսի ժամանակ։ ըստ երևութին հարցումը կապ չունէր ներկայ խո-

տակցութեան հետ. բայց քննութիւնից դուրս եկաւ կապը Ներքին պատերազմի ժամանակ Անգղիացւոց Կարոլոս Ա. թագաւորը գերի ընկնելով Շօալանդացւոց ձեռքը, ծախեցին նորան Անգղիացւոց 400,000 ֆունտ ստերլինգի. Քրիստոս նոյնպէս ծախուեց 30 արծաթի Տիբերիոսի ժամանակ. Դորանից յայտնի երևում հոգեբանական երևոյթների յարաբերութիւնը բնախօսական երևոյթների հետ. Մեզ թուում թէ՝ մտածողութիւնը չէ կարող առաջանալ արտաքին տպաւորութիւններից՝ մինչդեռ ոչ թէ միայն մտածողութիւնը, այլ նոյն իսկ մարդուս գործողութիւնները առաջանում են բնախօսական պատճառներից.

Բացի դորանից պէտք նկատել որ՝ այն մարդիկը, որոնք կորցնում են արտաքին զգացողական գործարանների մէկը, միևնոյն ժամանակ կորցնում և այն ներկայացումները, որոնք առաջանում են այդ գործարանների օգնութեամբ. Փօկտօր Հեցֆելդը պատմում է 17 տարեկան կոյր աղջկայ մասին, որ նա իւր այն բոլոր հասկացողութիւնները, որոնք առաջանում են տեսութեան գործարանով, կորցրել էր բոլորովին, մինչդեռ կուրացած էր 10 տարեկան հասակում. Ա յգպիսի հանգամանքներում խանգարուում ոչ թէ միայն աչքի արտաքին գործարանը, այլ և ուղեղի այն մասերը, որոնք կազմում են արտաքին գործարանը այդ զգայարանքի, այսինքն տեսարանական բլբակները. եթէ վերջիններն անվնաս են, միայն վնասուած է աչքը, գոյների ներկայացումը և իրերի ձևերը միևնոյն ոյժն են ունենում, ինչ որ ունէին նոքա՝ նախ քան տեսողութեան վնասուիլը.

Հոգեկան երևոյթները սկիզբն են առնում բնախօսական երևոյթներից և վերջանում նոյնպէս բնախօսականներով — այսինքն մկանունների շարժողութեամբ. «երբ ծիծաղում մանուկը՝ տեսնելով խաղալիքը, երբ չարանում Գարիբալդի դէմի իւր հայրենիքը ունեցած չափազանց սիրոյ համար, երբ գոռում օրիորդը առաջին սիրոյ վերայ մտածելու ժամանակ, երբ ստեղծում Նիւտոն տիեզերական շարժման օրէնքները և դրում նոցա հիմի վերայ՝ այդ ամեն գործողութիւններին վերջնական պատճառ յայտնում մկանական շարժողութիւնը» (Սեչենով). Երբ մարդ իւր հոգեկան գործողութիւնը արտայայտում ձայնով՝ այն ժամանակ շարժուում նորա կոկորդի մկանունները, երբ իւր միտքը գրում նամակի վերայ՝ շարժուում նորա ձեռքի մկանունները, երբ նա իւր միտքը ամփոփում մի որևիցէ գործի կամ առաջարկութեան վերայ՝ յառաջացնում բազմաթիւ մկանական շարժումներ.

Մենք ասածից հետևում որ՝ հոգեկան գործողութեան սկիզբն և վերջը բնախօսական երևոյթ է, իսկ մէջտեղը հոգեբանական, այսինքն սկսուում ղեղով՝ վերջանում բնախօսական երևոյթներով, օրինակ, երբ ուսուցիչն աշակերտին առաջարկում մի որևիցէ հարցումն, այն խոկումը և լիշողութիւնը, որ աշակերտը կազմում հարցման վերայ՝ արդեօք նա հոգեկան երևոյթ է՝ թէ նորա հետ կից է և բնախօսական երևոյթ. ամեն օրւայ փորձերը ցոյց են տալիս որ՝ նա կից է և բնախօսական գործողու-

Թիւններուն հետ։ Մարդ լսորին և երկարատև մտածումներէն յետոյ բոլորովին յոգնում է, գլուխը ծանրանում է և անընդունակ է լինում մի որևէ այլ աշխատանքի։ Հոգեւոր աշխատութիւնից յետոյ մարդու ախորժակը բացում է, իսկ ֆիզիական աշխատութիւնը նիհարացնում է և խանգարում գործարանները։ Փորձը ցոյց է տալիս որ՝ ֆիզիական մտաւոր աշխատութիւնից ուղեղի մնէրգային նիւթը փոխանում է, եթէ յոգնած մկանը չի հանգստանում և կորցրած նիւթի չափ սնունդ չի ստանում՝ մարդս նիհարանում է։ Ֆիզիական երկարատև մտաւոր աշխատութիւնից յետոյ և կամ առաւելապէս մտքի անկանոն գործողութիւնից ուղեղի մնէրգային նիւթը պակասում է։ Երկար կարած ժամանակ անհրաժեշտ են որ՝ այդ նիւթը լինում է գոնէ, հաստութիւնը կիսով չափ քչացած և ոչնչացած մասերի տեղը առաջացած ջրային հեղուկ։ Մնէրգային նիւթի վերջանալով թուլանում են մտաւոր կարողութիւնները, հոգին չի ունենում իր առաջ այլ սլացումն ու պայծառութիւնը, այնու հետև առաջանում է լճութիւն և ապշութիւն, որի ողբալի օրինակներն են շատ նշանաւոր և երևելի հանճարներ, որոնք կորցրել են բոլորովին իրենց մտաւոր ընդունակութիւնները, օրինակ, Հելդերլին և Լինտաու բանաստեղծները և Ռոմպոզիտոր Բեռնովինը և այլն։ Այդ երևոյթները չէին պատահիլ՝ եթէ մտածողութիւնը լինէր լոկ հոգեկան գործողութիւն։ Այստեղ մէջ բերինք «Բնագիտական (ֆիզիական) ուժերի և դիտէ միջև» Տինդալի ասած խօսքը։ «Ես մտածում եմ՝ ասում է նա՝ որ բոլոր երևելի մտածողները, որոնք ուսումնասիրած են այդ առարկան (ընդդիմութիւնը), պատրաստ են ընդունելու հետևեալ նեղմտութիւնը.—իրաքանչիւր իմացողութեան կամ ճանաչողութեան գործողութիւն, լինի այդ գործողութիւնը շօշափումն, մտածումն կամ զգայողութիւն, դա համապատասխան է ուղեղի մէկ որոշ հիւլէական շարժմանը (молекулярное), երբ յայտնի է ուղեղի գրութիւնը՝ կարելի է հետևցնել նորանից մտքի կամ զգացողութեան գրութիւնը, և կամ եթէ յայտնի է միտքը կամ զգացողութիւնը՝ նորանից հետևցնել ուղեղի գրութիւնը»։ Ի հարկէ ուղեղի այս կամ այն հիւլէական (մոլեկուլիարական) գրութիւն ստանալը լինում է ջղերով։ Եթէ կայ ջղերի հիւլէական շարժողութիւն, կայ և հոգեկան երևոյթ, եթէ չկայ առաջինը, չկայ և երկրորդը։ Սորանից բացառութիւն չէ կազմում ոչ մէկ միտք և ոչ մէկ զգացողութիւն։

Փիլոզոփութիւնները ցոյց են տալիս որ՝ ուղեղի քաշը և ծաւալը, համեմատութեամբ մտքի հետ, նոյնպէս նորա կազմակերպութիւնը և քիմիական բաղադրութիւնը, մեծ ներգործութիւն ունին հոգեկան գործողութիւնների վերայ։ Մարդու ուղեղը պէտք է ունենայ մէկ որոշեալ չափ (մինիմում) թէ քաշի և թէ ծաւալի կողմից, որից ստորն անկարելի է որ՝ նշանաւոր միտք յայտնաբերի հոգեկան գործողութիւնների վերայ։ Այն մարդիկը, որոնք չունին գոնեայ ուղեղի քաշի և ծաւալի չափը՝ նոցա հոգեկան գործողութիւնները չափազանց պակաս և թոյլ են, այդպիսի-

ներն են փոքրագլուխները — միկրոցեֆալները։ Փոքրագլուխները նրկա-
յացնում են կատարեալ նմանութիւն կապիկների հետ, թէ իրենց արտա-
քին շարժմունքով և թէ մտաւոր ընդունակութիւններով։ Նոքա ինչպէս
կապիկները՝ շատ են սիրում փայլուն իրերը և նոցա ձեռք բերելու հա-
մար մեծ ջանք են գործ դնում։ Նոցա կազմութիւնը ևս շատ է նմանում
կապիկներին։ Մի միտք ժամանակ չեն կարողանում հանգիստ նստել,
միշտ շարժողութեան մէջ են, նոքա համարեա հասկացողութիւն չունին,
միայն արտաքին շարժողութիւնից են հասկանում մէկի նպատակը, օրի-
նակ բարկութիւնը կամ սէրը, ի հարկէ շատ անգամ հակառակն են ըմ-
բռնում։ Նոցա յիշողութիւնը թոյլ է, թէև երբեմն մի քանի անձնաւո-
րութիւնից կարողանում են ճանաչել, դոքա նմանցնելու մեծ յարմարու-
թիւն ունին, ինչպէս և կապիկները։

Մեր ասածներից հետևում ենք՝ ուղեղի քաշը և ծաւալը մտքի տա-
տութեան պատճառներն են (թէև բացի դոցանից ուրիշ պատճառներ ևս
կան մտքի աւատութեան, որոնց մասին յետոյ կխօսենք)։ Բայց այս
յայտնի է որ՝ երևելի մարդկանց ուղեղի քաշը սովորական մարդկանց ու-
ղեղի քաշից աւելի են եղել, օրինակ, ընագէտ Կիւվիէի ուղեղը կշռում
էր 1861 գրամ (առաջ մարդու ուղեղի միջին քաշը է 1424 գրամ կամ
2 փունտ 25 $^{1}/_{2}$ լօտ)։ Շիլլերի ուղեղը կշռել են՝ երկու անգամ ծանր է
եղել մէկ ապուշի (идіотъ) ուղեղից։ Ապուշների ուղեղը համապատասխան
իրենց գանգին միշտ $^{3}/_{4}$ կամ $^{1}/_{2}$-ով քիչ են կշռում։ Սկսած ստոր կենդա-
նիներից բարձրանալով մինչև մարդը՝ հետզհետէ հոգևկան գործողութիւն-
ները ևս բարձրանում են և գլխի ուղեղի քաշը համեմատութեամբ նոցա
մարմնի հետ աւելի շատանում է։ Ուղեղի քաշի մարմնի հետ ունեցած մի-
ջին յարաբերութիւնը՝ սկսած ստոր կենդանիներից, օրինակ ձկներինը,
այնպես է համեմատում ինչպէս 1։ 5,668, սողուններինը 1։ 321, թռչու-
ններինը 1։ 212, կաթնասուններինը 1։ 186։ Եթէ համեմատենք զա-
նազան ցեղի շների, մարդակերպ կապիկների և մարդու ուղեղը միմեանց
հետ, կտեսնենք որ՝ աւելի մտացի ցեղին պատկանողինը տարբերուում միւս-
ներից իւր ուղեղի մեծութեամբ, կիսագնդաձևութեամբ և ծալքերի բազ-
մութեամբ։ Այդ տարբերութիւնը յայտնի տեսնուում է մարդու և միւս
կենդանիների մէջ։

Երկրորդ յատկութիւնը ուղեղի, որ մեծ ազդեցութիւն ունի հոգևկան գոր-
ծողութիւնների վերայ, է նորա կազմութիւնը կամ թէ նորա ձևը, նայնպես
մնարագոյն ուղեղի ծալքերի ճշդութիւնը։ Այդ մնարագոյն կամ կար-
միաշարթ մնարագոյն ծալքերը, որոնք գտանում են ուղեղի արտաքին մա-
կերևութի վերայ՝ առ այժմ ընդունուած է որ՝ նորա մեծ ազդեցութիւն
ունին հոգևկան գործողութիւնների վերայ։ Որքան այդ ծալքերը խոր, շատ
և դանդաղան են, այնքան հոգևկան գործողութիւնները ևս բարձր են, իսկ
որքան սակաւ և հասարակ՝ հոգևկան գործողութիւնն ևս այնչափ աւե-
լի թոյլ և աննշան են։ Փոքրագլուխ մարդկանց մնարագոյն ուղեղի ծալ-

քերը հասարակ են և թիւը շատ սակաւ. մինչդեռ նշանաւոր գիտականների ուղեղը զանազանուում միւսներից բազմաթիւ ծալքերով։ Ծալքերի բազմաթեամբ մեծանում և ուղեղի մակերևոյթը, որովհետև շատանում մոխրագոյն նիւթը և դարանով բարձրանում է մարդու հոգեկան գործողութիւնները։ Եթէ համեմատենք մէկ երեխի աստեղագէտի ուղեղը առյզակամ մշակի ուղեղի հետ, մեծ տարբերութիւն կգտնենք առաջնի և երկրորդի մէջ, երկրորդի ուղեղի ծալքերը կտեսնենք հասարակ են ինչպէս և իր պարապմունքը, իսկ առաջնինը տարբերուում զանազանատեսակ և բազմաթիւ ծալքերով։

Երրորդ յատկութիւնը ուղեղի, որ նշանաւոր աղդեցութիւն ունի նոյնպես հոգեկան գործողութիւնների վերայ, նորա քիմիական կազմութիւնը, նոյնպես նորա մէջ եղած ճարպի յայտնի քանակութիւնն է։ Կենդանիների և մարդու ուղեղի մէջ գտանուում մէկ որոշեալ քանակութիւն ճարպի, որի շատութիւնը կամ սակաւութիւնը մէկ որոշեալ սահման ունի։ Այս երևում նորանից, որ ուղեղի ճարպի քանակութիւնը չէ պակասում հիւանդութեանց ժամանակ, մինչդեռ մարմնի միւս գործարանները նիհարանում, այսինքն ճարպի քանակութիւնը պակասում նոցա մէջ, և ընդհակառակը՝ նա չէ շատանում՝ երբ մարդ գիրանում կամ երբ փորձի համար գիրացնում մի որևիցէ կենդանի։ Ամենից շատ ճարպ ունի կենդանիների մէջ մարդու ուղեղը, յետոյ միւս կաթնասունների և ապա թռչուններին։ Որչափ գործունեայ են հոգեկան երևոյթները և որչափ բարդ և զօրեղ է գլխի ուղեղի ջղերի գործնէութիւնը, այնքան նա շատ ճարպ է պարունակում։ Ճարպի ամենամեծ քանակութիւնը լինում այրական հասակում։

Մեր մէջ բերած հոգեկան և բնախօսական փաստերը ցոյց տուին մարմնի ներգործութիւնը ընդհանրապէս կամ ամբողջապէս հոգու վերայ։ Հիմայ մէջ բերենք մասնաւոր փաստեր, որոնք ցոյց են տալիս այն կապը, որ կայ մարդու հոգեկան և ֆիզիքական կեանքի մէջ։ Այս ևս պէտք ասած, որ մի քանի վերին հոգեկան գործողութիւններ սկզբում յայտնուում են անդրադարձութեան (рефлекс) ձևով, որը առաջանում ջղերով։ Ինչպէս օրինակ, տեսողութեան և միւս զգայողական գործողութիւնները սկզբում կախում ունին ջղերի դրութիւնից։ Նորածին մանուկները իրենց ծննդեան առաջին շաբաթում չեն կարողանում իրենց ուշադրութիւնը կետրոնացնել (fixer) մի որևիցէ առարկայի վերայ, բայց հետզհետէ կարողանում։ Մարդու աչքը կազմուած է այնպիսի ձևով, որ մինչև առարկայի ճառագայթները չեն ժողովում ցանցամաշկի կամ դեղին բծի (բեռնի) վերայ, մարդս չէ կարողանում պարզ տեսնել։ Եթէ մենք կամենում լաւ նայել մի որևիցէ առարկայի վերայ, պէտք մեր աչքին այնպիսի ուղղութիւն տանք, որ առարկայի նկարը լինի ուղղակի դեղին բծի վերայ։ Լոյսի և գոյների պարզութիւնը մեզ բաւականութիւն է պատճառում։ Իւրաքանչիւրը համարեա նկատած է, երբ մարդ

մանուկ աղօտ լուսաւորուած սենեակից մէկ պայծառ լուսաւորուած սենեակ, մէկ տեսակ բաւականութիւն է զգում։ Այդպէս եւ՝ երբ մանուկին պատահում աչքը այնպէս բռնել, որ նորա աչքի դէմին բժի վերայ անդրադառնում առարկայի նկարը, մանաւանդ պայծառ լուսաւորուած առարկայի, նա աշխատում աչքը այդ դրութեան մէջ պահել, որովհետեւ այդ զգացողութիւնը առաջացնում նորանում բաւականութիւն. ուրիմն աչքը պահել այդ դրութեան մէջ նշանակում ուշադրութեամբ նայել առարկային կամ կենտրոնացնել նորա վերայ իւր ուշադրութիւնը։

Լսողութեան ժամանակ միեւնոյն զգացողութիւնն է պատահում, ինչ որ տեսողութեան ժամանակ, այսինքն մանուկին բաւականութիւն է պատճառում։ Ցայտնի է որ՝ փոքր մանուկները սիրում են շատախօսութիւն, և մի որևիցէ առարկայի ձայն, թէև լինի այդ անխնամ, այնու ամենայնիւ բաւականութիւն է պատճառում նոցա. որքան այդ բաւականութիւնը զօրեղ է, այնքան նա աշխատում որ՝ իւր լսողութեան գործարանը մի և նոյն դրութեան մէջ մնայ, և լսողութեան գործարանի այդ դրութիւնը լինում այն ժամանակ, երբ ձայնի ալիքները հաւասարաչափ են ներգործում երկու ականջի վերայ. եւ։ Այդպէս սկզբնական ուշադրութիւնը կամ կենտրոնացումն ուշադրութեան՝ ջղերի և արտաքին զգացողութիւնների հետեւանքն է։ Միեւնոյնը պէտք է ասած և միւս զգացողական գործարանների մասին։

Վերլուծութիւնը (анализъ) և համադրութիւնը (синтезъ) սկզբում կախում ունին ջղերի դրութիւնից։ Օրինակ մանուկը նայում մէկ պատկերի վերայ, նա սկզբում տեսնում ամբողջ նկարը, յետոյ տեսնում որ նա բաղկացած է գլխից, պարանոցից, իրանից, ձեռքերից և ոտներից, և եթէ ուշադրութեամբ նայում՝ նա որոշում պատկերի ամեն մէկ դիծն առանձին. արդեօք ինչպէ՞ս է առաջանում վերլուծութիւնը և համադրութիւնը ինքն ըստ ինքեան, այդ կախուած է աչքի ընդունակութիւնից կամ կազմութիւնից, որ կարողանում զգալ կամ տեսնել առարկայի մէկ կէտը անկախ միւս կէտերից և միեւնոյն ժամանակ բոլոր կէտերը միանգամայն։ Այդ հանգամանքը առաջանում տեսողական ջղից՝ հետեւաբար աչքի նիւթական կազմութիւնից։

Մեր ջղերը բաղկացած են բազմաթիւ թելերից կամ ցանցերից, որոնք իրենց ստացած տպաւորութիւնները և զգացողութիւնները, իւրաքանչիւրը առանձին առանձին տանում և հաղորդում իւր կեդրոնին, չտալով ճանապարհին այդ զգացողութիւնը մէկ ուրիշ թելի։ Մաշկացանցի մակերևոյթի վերայ վերջանում ջղերի ցանցերը՝ իւրաքանչիւրը ջոկ ջոկ, բայց բոլորը միասին միութիւն՝ այսինքն մաշկացանցը կազմելով։ Մանուկը կարող է ամբողջ ձեռք տեսնել պատկերը, երբ նա անդրադառնում մաշկացանցի վերայ և կարող է առանձին նայել նորա մի որևիցէ մասին, օրինակ քթին, օգուտ քաղելով այն ցանցերից, որոնց վերայ ընկնում պատկերի այդ մասի նկարը, այն ժամանակ ամենից լաւ տեսնում քիթը, քիչ թոյլ՝ բերանը

և աչքերը, վերջապես ամենից վատ տեսնում ոտները, ինչպես քթից ամենահեռաւոր մասը այդ պատկերի. Միևնոյնը պէտք ասած և լսողական գործարանների համար, որ նորա ջիղը ևս լրացուցած է ցանցերից, որոնցով կատարուում վերլուծութիւնը և համադրութիւնը. ծրինակ երաժշտութեան ժամանակ կարողանում ենք լսել բոլոր գործիքների ձայները միասին (համադրութիւն) և կարողանում առանձին առանձին որոշել իւրաքանչիւր գործիքի ձայնը (վերլուծութիւն), ի հարկէ սորանից երևում որ՝ իւրաքանչիւր ձայն ունի իւր համապատասխան ցանցերը կամ ինչպես կոչուում են, կլավիշները. մարդու կլավիշները համարուում են թուով 3,000, այդ է պատճառը որ՝ նա կարողանում որոշել ամենացած ձայնն անգամ. Մեր ասածից երևում վերլուծութեան և համադրութեան կախումը ջղերի մարմնակազմական (անատոմիական) դրութիւնից.

Ինչպես ասացինք վերլուծութիւնը և համադրութիւնը կախուած է ջղերի դրութիւնից (система). Մեր ջղական դրութեան կազմութիւնը այնպես է, որ մէկ ջղի շարժողութեան մասը անցնում միւս ջղի վերայ և—զգացողականից՝ շարժողական ջղի վերայ. Ըստ անգամ մանուկը սաստիկ լոյսի տպաւորութիւնից մկանական շարժում է անում—ահա այս է ջղերի անդրադարձումը—մէկ ջղից միւսի վերայ. Երբ մանուկի աչքի դիմաց կայ մի որ և իցէ պայծառ լուսաւորուած առարկայ, նա ճչում, ճիռւում, ձեռքերը ոտները և իրանը շարժում, սորա պատճառը այն է, որ գրգռումն անցնելով տեսողութեան զգացողական ջղից՝ անդրադառնում շարժողական ջղի վերայ, որը գնալով ճիւղաւորուում ձեռքերում ոտներում և մարմնի այլ մասերում. Այդ պատճառաւ զանազան տպաւորութիւնները և ներկայացումները կազմում են ամբողջ խումբ ներկայացումների առարկայի մասին. օրինակ այսպիսի մէկ դէպք, մանուկը տեսնում զանգակը, լոյսի տպաւորութիւնը գնալով տեսողութեան ջղից, անցնում ձեռքի շարժողական ջղին, և ահա մանուկը ձեռքը երկարացնում դէպի զանգակը. երբ նա զանգակը առնում՝ ձեռքը ստանում շօշափողութեան զգացողութիւն և յետոյ ձայնի զգացողութիւն, այդ կերպով կազմում մէկ խումբ ներկայացումների՝ զանգակի ձևի և կարծրութեան վերայ. Երբ մանուկը սակաւ ինչ մեծանում և սկսում խօսել, այդ երեք ներկայացումների վերայ աւելանում մէկ ուրիշն ևս—զանգակի անունը, այն է, զնգ—զնգ. զանգակի այսպէս անուանելու պատճառն է լսողութեան գործարանի անդրադարձութիւնը (рефлексъ) լեզուի վերայ, այսինքն խօսելու գործարանի վերայ. Եթէ դուք մանուկին ասէք զնգ—զնգ, նա իսկոյն կներկայացնի զանգակի ձևը՝ կմոտաբերի ձայնը և կարծրութիւնը, նորա մօտ եթէ զանգակը խփէք, իսկոյն նա կասի զնգ—զնգ, կներկայացնի նորա ձևը ևլն.

Ջղերով մեր ստացած զգացողութիւնները, ներկայացումները կամ տպաւորութիւնները համազօր չեն լինում շատ անգամ՝ նայելով հանգամանքին, օրինակ մենք պատահում մինչև այժմ մեզ անծանօթ մէկ

մարդու ծանօթանալուն նորա հետ, իմանալուն նորա անունը, միաբանութիւն պահելուն նորա երեսի գծագրութիւնը և ձևը, այնպէս որ նորա հետանալուց յետոյ կարողանանք նորան նկարագրել և անունը յիշել։ Այդ ընթացքում երկար ժամանակ՝ մենք նորան չենք պատահում և չենք տեսնում, երբ յանկարծ պատահում ենք միմեանց, սկիզբը չենք ճանաչում նորան, պատահում ենք որ՝ յիշում ենք նորան հանդիպելը, յիշում ենք նորա հետ եղած խօսակցութիւնը, բայց պատահում ենք որ՝ չենք կարողանում յիշել նորա անունը։ Եթէ ուրիշից լսենք նորա անունը, շատ կարելի է մոռանանք րոպէական, իսկ ընդհակառակը, նորա երեսի գծագրութիւնը և ձևը յիշում ենք, և լինում է դորա հակառակը։ Լսում ենք մի որևիցէ անուն, յիշում ենք որ՝ այդ անունը մեզ ծանօթ է, յիշում ենք որ՝ մենք ծանօթ էինք երբեմն այնպիսի անուն կամ տղգանուն ունեցող մարդու հետ, բայց նորա երեսի գծագրութիւնը և ձևը չենք կարողանում ներկայացնել մեզ։ Այդպիսի երևոյթների պատճառը, որոնք յաճախ են պատահում, ինչպէս ասացինք՝ զգացողութիւնների և ներկայացութիւնների ոչ համաչափ լինելն է։ Շատ անգամ զանազան մանուածոր հանդամանքների պատճառաւ աւելի ուշադրութիւն ենք դարձնում մարդու ձևի վրայ քան նորա անուան, և շատ անգամ ևս անուան վերայ և դորա համար կարողանում ենք յիշել կամ մոռանալ նորա ձևը քան անունը, և երբեմն ևս ընդ հակառակն։

Լինում է երբեմն որ՝ մէկ ներկայացման կամ տպաւորութեան անյայտանալով կամ աննշանալով, աննշանանում և այն ներկայացումը կամ տպաւորութիւնը, որ կապ ունի նորա հետ, օրինակ ենք մի որևիցէ մարդու սովոր ենք եղել տեսնել մէկ յայտնի տեղում, տան մէջ և այն, այնպէս որ՝ մեր այդ տեղի վերայ ունեցած ներկայացումը կապում է մեզ յայտնի մարդու ներկայացման հետ։ Բայց ասենք այդ մարդը այլ ևս չէ պատահում, կամ տատիկ հիւանդութեան պատճառաւ կամ հետացել է այն տեղից կամ մեռել է, և ահա առաջուայ ներկայացման կապը հեղձնում է աննշանանում։ Ուրիշ օրինակ։ Մի որ և իցէ մարդու մենք տեսել ենք միջնախղճութեան մէջ, և անդադար ընկերութեան ենք, գուցեառ և նիհար։ Ես ահա այդ մարդը հարստացաւ, պաշտօններ և տատիճաններ է ստանում և փրանսում մեր ունեցած հին ներկայացութիւնները այդ մարդու վերայ հետզհետէ տեղի են տալիս նորերին։

Բարձր հոգեկան կեանքի գործողութիւնները ևս սերտ կապ ունին մէկ քանի բնախօսական երևոյթների հետ, օրինակ բանաստեղծութիւնը։ Փրանսիացի երևելի վիպասան Բալզակը տարօրինակ առողջապահութիւն էր քարոզում բանաստեղծ—մտաւորականների համար։ Ահա նորա խօսքերը, «Եթէ կամենում ենք որ՝ մեր սերունդն ընդունի մեզ իբրև մտաւորական, մենք պէտք է բոլորովին մեկուսանանք երկու կամ երեք տարի, այդ ատանձնութեան մէջ ոչինչ չպէտք է խմենք, բացի ջրից, և ուրիշ բան չպէտք ուտենք, բացի խաշած լօրիայից, պէտք է պարկենք. արևը մտնե-

լուց անմիջապես յետոյ և արթնանալ կէս գիշերին, որպէս զի կարողանանք աշխատել մինչև առաւօտ, իսկ մնացեալ ժամանակը պէտք անցնենք մեր աշխատութիւնը աչքի անցնելով, տարածելով, սրբագրելով և այլն։ Բալզակի օրը կամ առաւօտը սկսուէր ճաշից, մինչդեռ նորա բարեկամները վայելում էին առատ ճաշը, նա բաւականանում սակաւ ինչ ընդեղենով և ջրով։ Երեկոյեան 7 ժամին բարեկամներին լաւի գիշեր ասելով՝ գնում էր քնելու, արթնանալով միւս օրւայ ճաշի ժամանակ և այդպէս շարունակ։ Սովածութիւնից և անքնութիւնից նա շատ անգամ կորցնում էր իր ճանաչողութիւնը և հասկացողութիւնը, դորա համար շատ անգամ տեսնում էին նորան արշալոյսին Թաւիտալիս Place de caroussel—ում գլխաբաց, հողաթափներով և գիշերային զգեստով, առանց իրան հաշիւ տալու թէ ինչպէս է եկել և ընկել այնտեղ։ Բայրօնի մասին յայտնի է որ՝ համարեա ամբողջ գիշերները աշխատութիւնը անընդհատ՝ անցնելով իւր քաղցը սիգար ծխելով կամ ծխախոտ ծամելով կամ առանց շաքարի և կաթի կանաչ թէյ խմելով։ Ինչպէս Բալզակը, նոյնպէս Բայրօնը ևս մի չէին ուտում և ոչ էլ գինի խմում, որպէս զի այդ միջոցով աւելի կարողանան պահպանել ուղղի գործնէութիւնը։—Շիլլերը ևս սիրում էր աշխատել գիշերները, նա շատ սուրճ և շամբանեայ էր խմում։ Նորա մասին պատմուածն որ՝ իւր երևակայութիւնը գրգռուածը արհեստական միջոցով, օրինակ նա բոլորովին լաւ չէր կարողանում պարապել, եթէ փտած խնձորի հոտ չէր առնում։ և այդ պատճառով նորա պարապմանն սեղանի վերայ դասնուում էին միշտ փտած խնձորներ։ Վալտեր—Սկօտտի համար պատմուածն որ՝ իւր երևելի բանաստեղծական երգերը գրել է սալսաֆելի հոգեկան նեղութիւնների ժամանակ, օրինակ «Իվանգօէն» և «Լամերմուրեան հարսը»։ Դիկենսի համար ասուածն որ՝ նա չէր կարողանում լաւ մտածել և գրել, եթէ նորա առջև չէին գտանուում փոքրիկ արձանները, ինչպես և կաղնւոյ մեջան և հաստարակ դրիչ։ Երբ սաստիկ աշխատութեան սէրը գրաւուէր նորա միտքը, նա ընկնուէր և թաւիտուում ամբողջ քաղաքը, ուշադրութիւն չդարձնելով ամենևին եղանակի վերայ, որը ի հարկէ շատ անգամ լինուէր ի վնաս իւր առողջութեան։

Ադդիսի մի քանի դէպքեր յայտնի են և պիտանականների մասին, օրինակ Բիւֆոնը չէր կարողանում մէկ լուրջ բանի վերայ մտածել, եթէ չէր հագնուած բոլորովին և մազերը կարգաւորած, և դորա համար ծառայող պարը (պարիկմախերը) գալիս էր օրական երկու երեք անգամ, որպէս զի նորա մազերը նորից զարդարի և կարգաւորի։—Կանտը ճաշի ըզօսանքից յետոյ՝ սովորաբար մտածուէր վերջալուսի ժամանակ և դորա համար աշխատուէր նստել այնպէս, որ իւր աչքի առջև լինի մի որևիցէ հին աշտարակ։ Այդ հին աշտարակը այնքան անհրաժեշտ էր նորա համար, որ երբ նորա պատուհանի դիմացի կաղամախիները մեծացան և ծածկեցին նորա աչքից այդ աշտարակը, նա բոլորովին անընդունակ դարձաւ մտածելու, մինչև

որ կարեցին կաղամախիները և նորից երևեցաւ աշտարակը. ևէն. շատ օրինակներ։

Թէ հոգեկան երևոյթները անբաժանելի կերպով կապուած են բնախօսական երևոյթների հետ, դրա մասին կարող ենք բերել այնպիսի օրինակներ, որոնց մէջ հոգեկանը այնպէս սերտ հիւսուած է բնախօսականի հետ, որ դժուար է ցոյց տալ այն գիծը, որով այդ երկուսը որոշուում են միմեանցից, դոյա մասին շատ օրինակներ կան մանուկների հոգեկան կեանքի մէջ։ Մանկան սկզբնական հոգեկան կեանքը յայտնի կերպով տարբեր է հասակաւորից։ Նա (մանուկը) չունի այն ազատութիւնը, ճանաչողութիւնը կամ հասկացողութիւնը, ողջմտութիւնը, կեանքի այն բարդ եղանակները, որը ունի հասակաւոր մարդը։ Մանկան կեանքը ներկայանում է մեզ իբրև մեկ բարդ անդրադարձութիւն երբ մանուկը տեսնում է մի որևիցէ փայլուն առարկայ, նա մեկնում է դէպի այդ առարկան, այսպէս ներգործում է տեսութեան ջիղը շարժողութեան ջղի վրայ, հետևաբար այդ երևոյթը ըստ իսկականին բնախօսական է, բայց նորանում մի և նոյն ժամանակ կայ հոգեկան երևոյթի տարր ևս. տեսնելով փայլուն առարկան՝ մանուկը ուրախանում է զգացում։

Մանուկը տեսնելով անհաճոյ և երկիւղալի առարկայ, սկսում է աղաղակել, լաց լինել և զանազան շարժողութիւններ անել ևէն. ըստ էութեան այդ երևոյթը ևս բնախօսական է — այսինքն անդրադարձութիւն է. բայց միացած զգացողութեան հետ այսինքն երկիւղի։ Երբ մանուկը սկսում է քայլել այդ ժամանակ նա կեարտնացնում է իւր բոլոր հոգեկան և ֆիզիքական ոյժը. իրաքանչիւր քայլը նորան մեծ աշխատութիւն և հոգս է պատճառում։ Որովհետև նա մտածում է իւր շարժողութեան վերայ, եթէ այդ ժամանակ դրուէք նորան մի որևիցէ առարկայով, նա անպատճառ վայր կընկնի, բայց կես տարուց յետոյ. միևնոյն մանուկը տեսնում է վազվզում թիլիճոներիների յետևից չմտածելով ամենևին վայր ընկնելու վերայ։ Սկզբում քայլելը ֆիզիքական և հոգեկան երևոյթ է, իսկ երբ մարդ մեծանում է՝ նա մեքենական է դառնում բոլորովին։

Հոգե — բնախօսական երևոյթների մեքենականի փոխուիլը՝ կարելի է նկատել նոյն իսկ հասակաւոր մարդու կեանքի մէջ ևս։ Երբ հասակաւոր մարդը սովորում է մի որևիցէ գեղարուեստական գիտութիւն (տեխնիկական) օրինակ երգել երաժշտական գործիքների վերայ, սկզբում բաւական ճիգ է թափում իւր անհնազանդ մատները արագ շարժելու համար, բայց վարժողութիւնից յետոյ, առանց որ և իցէ դժուարութեան մատները մեքենաբար վազում են երգհնչի ստեղնիքների վերայ։ — Երբ սովորում ենք մի որևիցէ օտար լեզու, սկզբում դժուարանում ենք քերականական կանոնների և առանց կակազելու խօսելում, բայց վարժողութիւնից յետոյ խօսում ենք կանոնաւոր և առանց մի որևիցէ դժուարութեան։ Այդպիսի դէպքերում ոչ ոք չէ կարող ցոյց տալ թէ՝ որտեղ է դադարում հոգեկան գործողութեան մասնակցութիւնը և որտեղից է սկսում դառնալ բոլորովին բնա-

խօսական։ Կարելի է ցոյց տալ այնպիսի օրինակներ եւս, որտեղ մեքենական երեւոյթները փոխուում են հոգեկան երեւոյթների։ Քայլելու գործողութիւնը կատարուում առանց որ և իցէ գիտակցութեան կամ մտածողութեան, ուշադրութիւն չդարձնելով ամենևին մեր ոտների շարժողութեան վերայ, երբ մեր տուչեի ճանապարհը ուղիղ և հարթ է, բայց վատ ճանապարհով քայլելը պահանջում է ուշադրութիւն. անպատճառ պէտք է ուշադրութիւն դարձնենք մեր ոտների շարժողութեան վերայ՝ ընտրելու նոցա համար պատշաճաւոր տեղ։ Եւ դորա համար վատ ճանապարհով ճանապարհորդութիւնը մարդու դարձեցնում ոչ միայն ֆիզիքապէս այլև հոգեպէս, և այդ պատճառով կաղը նոյն իսկ ուղիղ ճանապարհ գնալու ժամանակ զգում ոչ միայն ֆիզիքական յոգնածութիւն, այլև հոգեկան։ Առհասարակ սովորական այսինքն մեքենական գործողութիւնները կարող ենք փոխել հոգեկանի, օրինակ ուսուցիչը մտնում դասարան, և այն խօսքերը, որ նա արտասանում, աղջունելով աշակերտներին, մեքենական են, որովհետև նորա հազարաւոր անգամ կրկնուած են. Բայց նա այդ խօսքերը կարող է արտասանել բոլորովին գիտակցաբար, գիտութեամբ ուշադրութիւն դարձնելով այդ խօսքերի վերայ։

Մեր բերած ապացոյցները հոգեկան և բնախօսական երեւոյթների փոխադարձ յարաբերութեանց մասին ցոյց են տալիս որ՝ թէև այդ երեւոյթները ըստ իրենց յատկութեանց տարբեր են, բայց այնպէս սերտ և անբաժան միացած են միմեանց հետ, որ կազմում են մէկ գործարանական (օրգանական) ամբողջութիւն այսինքն հոգին և մարմինը միանում են մարդուս անձնաւորութեան մէջ։ Սորանից հետևում է այն թէ՝ մարդու հոգեկան կեանքը ուսումնասիրել բոլորովին առանձին կամ բաժան ֆիզիքականից՝ ինչ մեծ անյարմարութիւն է ներկայացնում, այդ նշանակում է բաժանել այն, ինչ որ բնութիւնից ըստ ինքեան անբաժան է։

(Շարունակելի է յետոյ)։

(Թարգմանաբար)։ — Գէորգ ՀԵՓ. ԱՒԱԳԵԱՆ Էսպրանէ ուսանող

ՄԻՍԱԿ ԱՍԻԼԵԱՆՑ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՋՕՐԱՎԱՐԱՑ
ՋՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

(Ապրիլ 1881 Թ. Գ)

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ ԵՒ ՄՈՒՇԿԱՆ—ՆԻՍԱՒԱՒՈՒՐՏ.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ահա մոտեցանք Հայաստանի սահմանին, տակաւին ոչ ոք ընդդիմադիր չէ երևում, թերևս Վասակ մարզպան և Դենշապուհ համոզել են ժողովրդին չլսել Վարդանին.

ՄՈՒՇ—ՆԻՍԱՒ.

Եթէ խաղաղութեամբ, առանց պատերազմի իշխենք Հայաստանին, կըսկի կը լինի Աստուածոց և արքայի կամքը կատարել, ապա եթէ Հայերը միացած ապստամբեն և պատերազմեն մեր դէմ, մեք անշուշտ կը յաղթուենք և ամօթաբար կը լինինք թէ ներկայի և թէ ապագայի առաջ. Հայոց յամառութիւնը ոչ պատուով, ոչ խստութեամբ և ոչ մահով չի մեղմուի. նոցա կրօնն աւելի մահով է պայծառանում, իւրաքանչիւր սպանուածի ոսկորներն անգամ հարիւրաւոր հետևողներ են գտնում իւրեանց կրօնին. վերջապէս ես քաջ համոզուել եմ, որ Հայաստանում անկարելի է Մոգական օրէնքի հաստատութիւն գտնել մշտապէս, եթէ Հայերը միաբանած լինին.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Մուշկան—Նիւսալաւուրտ, ես այդչափ երկչոտ չէի համարում զքիզ.

ՄՈՒՇ—ՆԻՍԱՒ.

Այո, Տէր իմ, ես շատ վախենում եմ, և ակամայ յանձն առու եմ լինում Հայոց դէմ ելնել, վասն զի մեծ դժուարութիւնների պիտի հանդիպիմ.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Արեաց բոլոր ոյժը քո՞ւ թիկունք է, ի՞նչ տարակոյս կայ յաղթութեան.

ՄՈՒՇ.—ՆԻՍԱՒ.

Ես յօժար էի այս բանակի տասներորդ մասով ուրիշ ազգի դէմ գնալ քան այսչափ աշխել կարծուած պատրաստութեամբ Հայոց մի մասնի վերայ, վասն զի ես մտիկս պատերազմի դաշտերի մէջ եմ սպիտակացրել, չեմ տեսել, որ Պարսից մի մեծ գունտ կարողացած լինի մի քաջ Հայու

գործ կատարել։ Հայն երբ ճակատամարտի մէջ է մտնում, կարծես թէ գայլ կամ առիւծ է մտել ոչխարի հօտի մէջ, կամ մի հրդեհ։ Հորացած անտառի մէջ, մանաւանդ Վարդանը, որոյ քալած տեղը մահ է թագաւորում, նորա սուրը գերանդու նման դլուխներ է հնձում, աչքից ցոլացած կրակն ահեղ բանակները է վառում, ինչպէս վառեց և լափեց Սերուխտի բանակն Աղուանից աշխարհումը, և հազիւ մի բօթաբեր ազատեցաւ նորա գերանդուց։ այս պատմածներիս ստուգութեանն ականատես վկայ եմ, վասն զի ես էի այն բօթաբերի պաշտօն կատարողը։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ։

Այո՛, Հայոց քաջութիւնը շատ մեծ է, ես այդ քաջ դիտեմ, դիտեմ նաև որ եթէ նոքա միանան, Հայաստանը Պարսից գերեզմանատուն կդարձնեն, և մեր յաղթութեանց շատն Հայոց ձեռօք և հնարագիտութեամբն է եղել մեր թշնամեաց դէմ, ինչպէս դուած կայ մեր արքունի դիւանական արձանագրութեանց մէջ։ բայց այս պատերազմը կրօնական է, Միհր Աստուած մեզ անշուշտ կօգնի։ և Վասակ մարզպանը քակել է նոցա միութիւնը, մեր բանակն էլ լի է քաջ Հայերով։

ՄՈՒՇ — ՆԻՒՍԱԼ։

Տէր իմ, Վասակայ վերայ չդոյս դնել չէ կարելի, նա քամու աղացք է, որ կողմից քամին փչէ, առաջատաներն այն կողմն է դարձնում, նա միշտ կշռի ծանր կողմին է մտիկ տալիս։ վասն զի նա եթէ իւր բուն ազգին և կրօնին հաւատարիմ չէ, մեր դէմն աւելի ևս, զուր է նորա երդման հաւատալ։ նա հաղար անգամ սուտ ու երդմնազանց է եղել իւր կրօնակցաց և ազգակցաց մօտ, ինչպէս յայտնի է նորա գրածներից։ կատուն միայն իւր փորի համար է մուկն բռնում, ոչ թէ իւր տիրոջ օգտին։ Վերջապէս խոհեմութիւն չէ ազգուրացին վստահել, եթէ նա իւր արիւնակից, աննդակից, կրօնակից և ընկերակից մարդիկ զոհում է իւր օգտին։ մեզ աւելի ևս պիտի զոհէ, նա մինչ ցարդ դրեթէ միշտ վնասել է Արեաց Տրան։ ես օձից այնքան երկիւղ չեմ կրում, որքան Վասակից, որոյ շողոքորթ, երկճղի լեզուն և խորերայ շարժմունքն ցոյց են տալիս իւր հոգու նենդութիւնը։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ։

Այո՛, այդ ամէնը ճշմարիտ է, Վասակը քամու աղացք է, բայց անիւները մեր ձեռին են, նա կշռի ծանր կողմին է յարում, բայց կշիռը մեր ձեռն է, մեք նորա շահուց և նպատակի յարմար խոստումներով միշտ մեր կողմն կպահենք։ նորա թոյլ կողմերն արդէն լաւ ճանաչել ենք, կը-խոստանամք նորան տալ Հայաստանի թագն ու գաւազանը, կկաթենք գինքն և գործ կածենք մեր կամաց համաձայն, եթէ յաղթենք, յաղթութեանն պատկառ մեզ կսեպհականացնենք, եթէ յաղթուինք, բոլոր վնասի պատճառը նորան կներկայացնենք Արքայի առաջ, որ և արդէն իսկ կասկածում է նորա վերայ։ (Աբոաշէբ կը դնէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԱՐՏԱՀԻՐ.

ԱՐՏԱՇԻՐ.

Տէր իմ, Հայաստանի վերակացու Դենչապուհը ողջոյնս ձեր հրամանին ձեզ ներկայանալ։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Թող գայ, թեւևս մի կարևոր լուր ունի (Արտաշէր կը դիմէ)։

ՄՈՒՇ—ՆԻՍԱՒ.

Դենչապուհոյ գալուստը յայտնի ապացոյց է Հայոց ապստամբութեան, եթէ Հայեր չվճռէին պատերազմիլ, նա դուրս չէր գալ Հայաստանից և գուցէ վտանգից է խոյս տուել։ (Դենչապուհ կ՚դիմէ)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԴԵՆՉԱՊՈՒՀ.

ԴԵՆՉԱՊՈՒՀ.

Ողջոյն փրկազունք։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ո՞ղջ է ձեր գալուստը։

ՄՈՒՇ.—ՆԻՍԱՒ.

Եւ ի՞նչ լուր Հայաստանից։

ԴԵՆՉԱՊՈՒՀ.

Տէր իմ, ըստ հրամանի Արեաց Տէառն, ես Հայաստան մտած օրից սկսեցի սարսափելի հարկահանութիւն, տարիներով յառաջ մեռածներից իսկ գլխահարկ առի նոցա ժառանգներից, եկեղեցականներից կրկնապատիկն առի, շէն և անշէն տեղերից, եկեղեցաց փլատակներից, վանքերից, մինչև անգամ գերեզմանատանց խաչաքարերից հարկ առի, բայց ինչքան նեղեցի, այնքան աւելի տարածեցաւ նոցա կրօնն և համարձակութիւն դտաւ, ինչքան տանջեցի և զանազան սուտ պատճառանօք մահացրի, աւելի հաստատուեցան իւրեանց հաւատքի մէջ, նոցա կրօնն միացել է իւրեանց ուղղի, արեան և հոգւոյ հետ. պարզև կամ տուգանք, սէր, կամ տեսլութիւն, քաղցրութիւն կամ խստութիւն միևնոյն է նոցա մօտ, տգետ պառաւներն իսկ իւրեանց կրօնականներից աւելի պնտահաւատ են։ Վերջապէս Հայաստանի մէջ Մաղդեղանց օրէնքի հաստատութիւն գտնելը անհնար է, թէև Աստուածներն անգամ մեզ օգնեն. ես բոլորովին թերահաւատում եմ, որովհետև փորձով տեսայ, մի տարւայ մէջ հաւաքածս հարկն հաւասար է 10 կամ 20 տարւայ հարկին, որոյ մեծ մասն պարզև և կաշառք տուի զանազան անձանց, թողուլ իւրեանց կրօնն կամ աշխա-

տակից լինել ինձ, բայց չկարողացայ նպատակիս հասանել, Արևաց Տեառն կամքը լիովին կատարել, զուցե այս պատերազմն էլ չկարենայ կատարել և ղուր արիւն թափուիլ և ծախս լինի։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ։

Դու չկարացիր գոնէ երկպառակութիւն ձգել Հայոց կրօնականաց, աշխարհականաց, և նոցա նախարարաց մէջ, ի՞նչէ պաշտօնակալներն չփոխեցիր, անարժաններն պաշտօնի չկացուցիր, որով կարող լինէիր գըժատելիւն պատճառել։

ԴԵՆՇԱՊՈՒՀ։

Տէր իմ, ես ամենայն տան մէջ խռովութեան որոմներ ցանելի առատ առատ, այնպէս որ հայր և որդին միմեանց օխերիմ թշնամի արի, բայց երբ գործը կրօնի վերաբերի, խսկոյն մոռանում են իւրեանց թշնամութիւնն, անձնական օխն և վրէժխնդրութիւնն, միանում իրարև մի սիրտ և մի հոգի, կրօնը նոքա Հայ եկեղեցւոյ ամբողջութեան, ինքնուրոյնութեան, ազգութեան, լեզուի և հայրենեաց միակ նեցուկ և պաշտպան են ընդունում, միայն Վասակ Մարզպան և իւր հետ մի քանի անձինք մեր կողմն են այժմ, բայց նոքա ևս կասկածելի անձինք են, նոցա վերայ հոյս դնել կարելի չէ, նոքա համարումն, յարգ կամ բարոյական ազդեցութիւն չունին իւրեանց ազգի մօտ, վասն զի բոլորն ևս ընդունում են նորանց իբրև ստահօտ, խաբեբայ, անխիղճ և անկրօն, վասն զի նոքա թէ անբարոյական են իւրեանց կրօնի մէջ և թէ երկու կողմին էլ մեծ վնասներ են տուել, երբեմն մեզ հետ միացել են, եկեղեցի են քանդել, Աստուծոյ հիմնարկութիւն են սրել, և երբեմն ջարդել են մոգերին իւրեանց ազգի հետ միացած, միշտ կշռի ծանր կողմին են մխիկ տուել, նոցա հոգւոյ և սրտի մէջ ոչ Մազդեզանց և ոչ Քրիստոնէական կրօնի նշոյլ չկայ, նոցա մօտ ամենայն ինչ ունայն է, իւրեանք անխիղճ և անկրօն գոլով, նոցա պաշտածն է միմիայն իւրեանց անձնական շահը, զոր ձեռք բերելոց համար, կրկին մոռանում են պարգևատուն և բարերարն։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ։

Նոցա անկրօնութիւնը, անխղճութիւնը կամ անբարոյականութիւնն ու ստահօսութիւնը մեզ դիպի չէ. մինչդեռ շահամոլ անձինք են Վասակ և և իւրայինք, մեք էլ շարունակ կը խոստանամք նոցա աւելի մեծ պատիւ, փառք և իշխանութիւն, մինչ յաղթենք, յետ յաղթութեան կը պատժենք նորանց իբրև երկու կողմի ընտրեալ յանցաւորներ։

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ։

Այժմ ո՞ր է Վասակ։

ԴԵՆՇԱՊՈՒՀ.

Նա այսօր իւր համախոհների հետ պէտի բանակն եկաւ ձեզ ներկայացնելու, ինձ ուղեկից էր, արքունի գանձն անվնաս գանձարան հասցնելու։

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ.

Եւ ո՛ւր գիտէ, գուցէ քեզ ընկերացել էր, մի հնարքով արքունի հարկն յափշտակելու, բայց չէ յաջողել, կամ եկել է մեզ խաբել, տանել Հայաստանի խորերն և կոտորել տալ. նորա միտքն ու նպատակն դժուար է իմանալ, նա օրն ևօթն գոյնի է փոխում։

ԴԵՆՇԱՊՈՒՀ.

Նա այժմ մեր կողմն է, վասն զի էլ վստահութիւն չունի իւր ազգի մէջ մնալու, մի քանի անգամ բռնուել է, կամեցել են քարկոծել, բայց աղաչելով և սուտ երդմամբ պրծել է, քանջ գիտէ որ այլ ևս չէ կարօղ խաբել. այժմ մեր կողմի կշռի թաթը ծանր է երևում նորան, նա մեծ յոյս ունի, որ պիտի յաղթենք և ինքը թագաւոր լինի, և այն նպատակաւ միայն իւր երկու որդիքը պատանդ է թողել մեզ մօտ Արևաց Դուռն. բայց ահա եկաւ նա, ես գնում եմ Արքայի մօտ հարկն յանձնել գանձարանին, (կը դնէ, վաճառ կը մտնէ դռա դռնէն)։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՍԱԿ.

ՎԱՍԱԿ.

Ողջոյն ձեզ պիւցաղունք Արևաց։

ՄԻՀՐ. ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ.

Ո՞ղջ է ձեր գալուստը։

ՎԱՍԱԿ.

Զօրութեամբ և յաջողութեամբ Միհր Աստուծոյ և Արեգական ողջ է և ըստ ամենայնի յաջողակ։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Թէպէտ նամակներով բաւական տեղեկութիւններ առել եմ Հայոց վերայ, լսել եմ քո քաջագործութիւնները Դենշապուհից, բայց կամենում կրկին լսել բոլոր հանգամանքն։

ՎԱՍԱԿ.

Քաջազուն տէր, ինչպէս կանխաւ յայտնել իմ Արքային և ձեզ, Հայիր արդէն ղղուած Քրիստոնէական կրօնից, յօժար և մտադիր էին ընդունել Մաղեղանց օրէնքը, բայց միայն մի քանի կրօնապետներ, ինչպէս են Յով-

սէվ Կաթուղիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղէոնդ երէց և նոցա համամիտ մի քանի իշխանք, Վարդան սպարապետ իւր եղբայրներով և ազգակից-ներով, Արշաւիր Արշարունին, Խորէն Խորխոռունին, և ևս. իբրեանց ընտանեօք և փոքրիկ գնտիւրովն արդել ք եղան բոլոր Հայոց կրօնա-փոխութեան, և խիստ յանդգնութեամբ պատասխանեցին Արքայի հրա-վարտակին և ձեր նամակին, ես թէև շատ ընդդիմացայ, բայց չյաջողեցայ համոզել, ճարահատեալ միացայ նոցա հետ, ստորակնքեցի և երդուեցի պաշտպանել Քրիստոնէութիւն, նոցա հետ Արքայի մօտ դիմեցինք, մեր-ժեցինք նորա հրամանը, բռնտարկեցանք. այս ամենը յայտնի է ձեր քա-ջութեան, Արքայի պալատական ծածուկ Քրիստոնեայ ներքինին խրատեց մեզ առ երեսս կատարել Արքայի կամքը. դառնալ Հայաստան, ապստամ-բել և պաշտպանել մեր կրօնը, նորա խրատով մենք ետաքեցինք Արքային, նոյն ժամանակին ես թէև կամեցայ գաղտնիքն յայտնել ձեզ, բայց շուտով մոգաց հետ ուղեւորելով դէպի Հայաստան, միջոց չունեցայ ընկերներիցս լսինուել և յայտնել, և յետոյ թէպէտ գրեցի, բայց նամակս բռնելով Վարդան, չկարացի նպատակիս հասանել և աւելի կասկածաւոր եղայ նոցա մօտ։

ՄՈՒՇ — ՆԻՍԱՆ.

Եթէ գաղտնիքն յայտնէիր Արքային, իսկոյն Հայոց վերայ թագաւոր պսակուելով Հայաստան պիտի վերադառնայիր, իսկ ընկերակիցներդ Սա-դաստան կամ Անյուշ բերդ պիտի դնային անդարձ և դու բնաւ դժուարու-թիւն պիտի չկրէիր հանգիստ և ապահով թագաւորելու։

ՎԱՍԱԿ.

Ա՛յն անյաջողութիւն, որ ինձ պատահեցաւ, Թերևս Մ՛իհր Աստուծոյ պատիժն է, որում երբեմն անդիտութեամբ չէի պաշտում ըստ արժան-ւոյն, բայց այժմ յուսամ, որ հաշտ է ինձ հետ Մ՛իհր Աստուած և պիտի հասանեմ նպատակիս։

ՄՈՒՇ. — ՆԻՍԱՆ.

Անշուշտ կը յաջողի քեզ միայն այն ժամանակը, երբ կարողանաս քա-կել Հայոց միութիւնը, և առանց պատերազմի և արիւնհեղութեան յաղ-թել, և յառաջ տանել Աստուածոց և Արքայի կամքն։

ՎԱՍԱԿ.

Իմ բոլոր աշխատութիւնս և ջանքս էշէն Երկրի վերայ թագաւորել, ոչ թէ աւերակաց։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Բայց դու ինչի՞ գոնէ մոգաց Հայաստանիր ընկերակցացդ գաղտնի նպա-տակը։

ՎԱՍԱԿ.

Տէր իմ, ես յայտնեցի Մոգպետին, նա շատ զգուշացաւ, բայց ապըստամբ Վարդան դաշտի գրել էր Յովսէփ Կաթուղիկոսին իւր դիտաւորութիւնը, նա զրգռելով ժողովուրդը, Ղէոնդ երիցու առաջնորդութեամբ արք և կանայք մեր բանակի դէմ ելան Անգղ գեղի մօտ, կոտորեցին մոգերին և ղիս կապած ներկայացրին Յովսէփին, և մինչ մտադիր էին քարկոծել ղիս, ես հապիւ յաջողեցայ երդմամբ խաբել, նորանով կրկին գրաւեցի նախարարաց վստահութիւնը և զօրքն երիք մասի բաժանել, մի մասն Վարդանայ հետ դիմեց Աղուանից օգնութեան Սիբուխտի դէմ, երկրորդ զօրաբաժինն յանձնեցի Ներշապուհին պահպանեցի սահմանագլուխն, իսկ երրորդ զօրաբաժինն իմ մօտ պահեցի բոլոր համամիտներովս։ յաջողեցայ շատ տեղեր Ատրուշաններ շինել, եկեղեցիք կործանել, ամուր բերդերն գրաւել իմ իշխանութեան տակ, Յունաց բաժին Հայաստանի վերակացու Վասակայ ձեռօք քակեցի Յունական Հայոց միաբանութիւնը և չթողի օգնել Արեաց բաժին Հայաստանի Հայոց, գրելով թէ «Արքայն կրօնի կատարեալ ազատութիւն է տուել, բայց Վարդան ապըստամբել է և կամի պատերազմել և թագաւորել», նոյն միջոցին յետ դարձաւ Վարդան Աղուանից աշխարհից, ես օգնութիւն խնդրեցի արքայից, բայց զօրաց գալն յետաձգեցաւ, ես ճարահատեալ թողի ամենայն ինչ և փախայ։

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ.

Ուրեմն Հայեր միաբանած պատրաստ են պատերազմելո՞ւ։

ՎԱՍԱԿ.

Այո՛, Վարդան իւր համախոհների հետ մինչ աչք առած պատրաստուել է պատերազմել Արեաց ահեղ բանակի դէմ, ունի վաթսուն հազարի չափ խառնիճաղանճ բազմութիւն արանց և կանանց, բայց նոքա Արեաց քաջերու սրերն լուանալու շատ քիչ են։

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ.

Մենք չպէտք է վստահինք մեր բազմութեան վերայ, մեր գաղան փղերի կատաղութեան վերայ. Վարդանայ քաջութիւնն ու ռազմագիտութիւնը ծաղրում է բոլորին, քակում է Մատեան գունտը, մանաւանդ եթէ 60 հազարն ևս ինքնայօժար են պատերազմում, դու քո նպատակին չես կարող հասանել պատերազմելով, կը զգկուես գահից և թագից, և մեք ամենքս կամ պատերազմի մէջ կընկնենք ի զուր, կամ Արքայի առաջ ամօթահար և պատժապարտ կը լինինք, նոցա միութիւնը քանդելու հնար գտիր։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Մինչ Վասակայ հնարագիտութիւնը պակաս է Վարդանից, նա թէ իւր քաջութեան և սրին է վստահացել, իսկ Վասակայ խելքն ու խմաս-

տութիւնը կարօղ է բթացնել նորա սուրը, թող թէ մի կատաղի փիղ կարող է լեղապատառ անել Վարդանայ գնտի խառնիճաղանճ բազմութիւնն, ոտնակոխ անել և չիոմել ամբողջ բանակը։

Վ. Ա. Մ Ա. Կ։

Վէհազունն տեարք, ես բոլորովին վստահ եմ յաղթութեան, մինչդեռ մեզ օգնական ունինք Մեհր, Որմիզդ և Արեգակն, իսկ նա զրել է իր յոյսը մի աղքատ հիւսի որդու վերայ, որ չկարաց ազատել զինքն տակաւ Հրէից ձեռքից և մեռաւ խաչի վերայ, զայս գիտէ նաև ինքն Վարդանը, բայց միայն յամառ կամակորութիւնն է ստիպել զինքն ապստամբել։

Մ Ո Ւ Շ — Ն Ի Մ Ա Լ։

Բայց աւելի լաւ չէ՞ առանց արիւնհեղութեան յաղթել։

Վ. Ա. Մ Ա. Կ։

Եւ դուք դեռ ճակատամարտ չսկսած ցրուի վարդանայ բանակը, կամ անձնատուր լինի, վասն զի ես ինձ համամիտներ ունիմ նորա բանակի մէջ, որք կարող են ամենայն տեսակ չիոմութիւն գոյել, յաղթուելու ատ փողեր հնչեցնել և կամ Վարդանին վտանգի մէջ ձգելով սպանել ու ճակատամարտը դադարեցնել և խաղաղութիւն ընդրել Արեաց արքայի ցանկացած բոլոր պայմաններն յանձն առնելով։

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ։

Մուշ—Նիսալաւուրտ, դու քաջ ծանօթութիւն չունիս Վասակայ վերայ, գորա հնարագիտութիւնն հաւասար է Աստուածոց իմաստութեան, դու բոլորովին հետևիր Վասակայ խորհրդին. ես ամենահարկաւոր գործի համար ստիպուած եմ գնալ Արքայի մօտ, ամբողջ բանակը ձեր երկուքի խոհեմութեան եմ յանձնում։ Քաջ Վասակ, դու բոլորովին վստահ եղիր, որ քիչ միջոցի մէջ իմ միջնորդութեամբ կատանաս թագ և պատուան, դու այսօրից իրաւունք ունիս իբրև թագաւոր գործել, քեզ պաշտօնակալներ, նախարարներ կարգել. նոր նախարարաց տոհմ ջոկիր քո համախոհներից, հներն խափան զրկիր իրաւունքից, այսուհետև որդուց որդի պիտի թագաւորէք Հայոց, միայն թէ Արեաց Տրան հնազանդ լինիս, Ասուրեանց պայծառութեան հոգ տանես։

Վ. Ա. Մ Ա. Կ։

Ահ Տէր իմ, այդ խոստումդ միայն կարող է փրկել Հայաստան թէ հին նախարարաց բռնութիւնից և թէ մոլար ապագից, ես այսօր ձեր հրամանաւ կը գրեմ Հայաստան իմ համախոհ անձանց իբրև թագաւոր, կընտրեմ ինձ սպարապետ, նախարարներ, վերակացու, կուսակալներ զանազան գաւառաց, կըտամ իրաւունք յափշտակել հին նախարարաց սեռընդոց ինչքն ու ստացուածքը, միահեղ խռովութեան փոթորիկ պիտի ձգեմ Հայաստանի մէջ, մինչ Վարդան և իւրայինք մեզայ գոչեն և հնազանդութիւն ուխտելով դիմեն Արեաց Տուրը օգնութիւն և միջնորդութիւն խնդրել իւրեանց դէմ ապստամբներին ջնջել։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ունի՞ս քեզ հետ համախոհ և վստահելի անձինք։

ՎԱՍԱԿ.

Այո՛, տէր իմ, կրօնականներից ունիմ երկու քահանայ, Պետրոս և Զանգակ, իսկ աշխահական իշխաններից ունիմ Արտակ իշխան Ռշտունի, Գաւիշայ իշխան Խորխոռունի, Գիտ իշխան Վահևունի, Տիրոց իշխան Բագրատունի, Մանէճ իշխան Ապահունի, Վարազշապուհ իշխան Պալունի, և՛լն. և՛լն, իւրեանց գնտերով և ընտանեօք, նոքա շատ յաջողակ են թէ ժողովուրդը գրգռելու ընդդէմ Վարդանայ, թէ կրօնականաց և աշխարհականաց դասերը միմեանց ատելի անելու, մանաւանդ Պետրոս և Զանգակ քահանայք կարող են այ ձեռն ձախ ձեռին թշնամացնելու, նոքա այժմ ինձ հետ եկել են ձեր քաջութեան ներկայանալու։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ո՞ւր են այն քաջերն, որ նոյա վարձ խոստանամ, որպէս զի քաջալերուին քաջագործութեան մէջ, թող ներս գան։

ՎԱՍԱԿ

Այժմ այս րոպէին կը ներկայացնեմ ձեր քաջութեան, (կը դնդնէ)։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ես ինձ վերայ այնքան վստահ չեմ, որքան Վասակայ վերայ, Մուշեղ—Նիսալաւուրտ, այժմ վստահ ես յաղթութեան։

ՄՈՒՇԵՂ—ՆԻՍԱՒ.

Տէր իմ, Վասակայ անխիղճ բնաւորութիւնը, խորամանկութիւնը, փառասիրութիւնը, հակասական և պատ իպատ խօսքերն ինձ ասելի վհատեցնում են քան թէ խրախուսում։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ

Բայց դու աշխատիր ժամանակից օգուտ քաղել, դուցէ յաջողես նորա ձեռօք ցրուել Հայոց միութիւնը և չթողալ պատերազմել մեր դէմ։

ՄՈՒՇԵՂ—ՆԻՍԱՒ.

Ես պիտի աշխատեմ որ և իցէ հնարքով Վասակ մեզ բարեկամ պահել եթէ օգուտ էլ չգայ մեզ, գէթ չվնասէ, չմիանայ իւր ազգի հետ։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ

Ուրեմն դու շարժուիր ըստ պահանջման ժամանակին։ լրտեսիր նորա քայլքաղքն, արդէն Արքայն երդուել է Արեգական վերայ, եթէ նա յաղթէ և պիտի պատժուի անշուշտ, մենք մեր օգտի համար ստախօսին սուտ խոստումով կը խաբենք, մեր շահը և քաղաքավարութիւնն էլ այնպէս է պահանջում։ (Վասակ, Պետրոս և Զանգակ կը մտնեն)։

(Կը շարունակուի)։ Ս. ԳՆՈՒՆԻ։

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ.

(Շարունակութիւն տե՛ս Արարատ, 1884 Յունվար.)

Ընտ ցանկալի կլիներ, որ քաղաքների փողոցների նոր մասերի շինութիւնը համապատասխանէր մեր այժմեան բնակած տեղերի առողջապահական շինութեան մասին եղած հասկացողութեան, այս՝ մեծ քաղաքներում ամենից կարևոր է. որովհետև նա ամեն տեղ կաղմում սաստիկ խիտ բնակութիւն։ Այնուամենայնիւ քաղաքների բռնած տեղերի տարածութեան մեծութիւնը համապատասխանում բնակութեան մեծութեան, մէկ կողմից մարդկի աշխատութեան, որքան կարելի է, քաղաքական կեանքի կենդրոնի մօտ բնակել, միւս կողմից նորա տիպուած են բաւականանալու առաջուանից աւելի նեղ բնակարաններով վերջին տասն տարուայ մէջ կենսական պիտոյքների թանգութեան պատճառով։ Այս պատճառով ոչ թէ միայն բոլոր տները չափազանց խիտ են քան թէ առաջուայ տարիներում, այլև, բացի նրանից, ամայի դետնի մնացած իւրաքանչիւր կտորը գործ է ածուում շինութեան համար, իսկ հին տները ընդարձակուում են, որպէս զի կարողանան տեղաւորցնել կրկնապատիկ աւելի բնակիչ։ Մարդկների այդպիսի խտութիւնը՝ համարվում է անկասկած քաղաքների վատ առողջապահական դրութեան պատճառներից մէկը. որ՛ան ժողովուրդը խիտ է բնակուած, այնքան աւելի նորան խլում ինքնագլխ օդ, և այնքան աւելի ապականում շէջիջը և ընդհարդձ աւելի դժուար է լինում տների և փողոցների մաքրութիւնը պահել և աւելի զոհ են դնում մահուան համաճարակ հիւանդութիւնների ժամանակը։

Սրանից յետոյ շատ զարմանելի չէ, որ շատ տեղերում զորօրինակ դիւղերում, ուր բնակութիւնը այնքան խիտ չէ ինչպէս քաղաքներում մահկանացութիւն աւելի սակաւ է լինում, և այս՝ մեծանում քաղաքների այն մասերում, ուր ժողովուրդը աւելի խիտ բնակուած և կեղտոտ է։ Պէտք չէ միայն մոռանալ, որ սակաւաբնակ քաղաքների մասերում տեղաւորուած են գլխաւորապէս ընչաւէտ դասեր. իսկ եթէ պատահի, որ բնակութիւն այն ժամանակ մահկանացութիւնը նոցա մէջ աւելի շատ կլինի քանէ խիտ բնակուած մասերում գալով դիւղերին, որոնց բնակիչների ցրուած օգտակար դրութիւնը նուազում վնասակար պայմաններից, որոնք մինչև ցայսօր ևս գտանվում են դիւղերում, այս պատճառով չափազանցութիւն կլինէր ասել, որ դիւղական բնակիչները քաղաքի բնակիչներից աւելի առողջ են։ Դիւղական բանակիչների առողջութիւնը սովորաբար չափազանցուում։ Ճշմարիտ է թէ և, իւրեան սովորութեան և աշխատանքին համեմատ համ-

բերող գիւղացին աւելի շատ ժամանակ է անցկացնում մաքուր օդի մէջ քան թէ քաղաքացին, պնու ամենայնիւ շատ գիւղերի ճշմարիտ քննութիւնները ցոյց տուին, որ մահկանացու թեան կողմից չիտ չեն մնում անառողջ քաղաքներից։ Ա յս բանը զարմանալի չէ, եթէ անդադար նայենք գիւղերի առողջապահական պայմանների վերայ — ամեն տեսակ կեղտոտութիւններ, որոնք լեցուած են փողոցներում և բակերում, աղբի դիզուրը տների և ջհորների մօտ լինելը· արտաքնոցների սարսափելի դրութիւնը, բնակարանների, ախոռների և գոմերի միմեանց կից լինելը և—այս բոլորը միասին յառաջացնում են խոնաւութիւն, գետնի ապականում, գարշահոտութիւն և օդի ապականում՝ քան թէ քաղաքներում։

Գիւղական բնակարանների այս դրութեան հետ աւելացրէք, ամեն օրինաց հակառակ առողջապահական կանոնները, անձրևային եղանակում խրճիթները լեցուած են մարդիկներով և նոցա օդը սովորաբար պիտի լինի բաղնիսի օդի նման խտացած վառարանի մօտ կախուած մանկական սպիտակեղէնների հոտով, ընտանի կենդանիներից յառաջացած գարշահոտութիւնով, խոհանոցի հոտով, ծխով և այլն։ Հասկանալի է, որ մարդկային պղպիսի դրութեան մէջ եթէ մանի մի անտուղը մարդ՝ իսկոյն յաջող պիտի գառնայ։ Եւ ոչինչ զարմանալի չէ, որ մանուկները այդպիսի հանդամանքներում մեռնում ճանճի նման· վատ օդը, անմաքրութիւնը ամեն հանգամանաց մէջ և մեծաւ մասամբ անյարմար կերակուրները յառաջացնում են մորթի և խուլերի հիւանդութիւն, ոտների ծռում, փորի ուռչելը և մարմնի հիւանդութիւնը, որով շատ անգամ որոշվում է գիւղական գունեղ երիտասարդը։ Այսպիսով գիւղերի մէջ առողջապահական պայմանները աւելի դրութեան մէջ են գտանվում քաղաքների նման, և եթէ մինչև ցայսօր առողջապահական կանոն գլխաւորապէս գտանվում քաղաքներում, միայն նորա համար էր, որ նրանց մէջ աւելի մեծ հնարներ կային առողջապահութեանը հսկելու մասին։ Այժմ ժամանակ է միայն ուշադրութիւն դարձնելու գիւղի այն բանի վերայ, որ գիւղացիք լաւ մաքրեն իրենց խրճիթները, որպէս զի աղբային կոյտերը չտապականեն գետինը, ջհորները, և այլն։ Արդէն մասամբ քաղաքների մէջ եղած առողջապահական լաւ կէտերը կարելի է մտցնել նաև գիւղերի մէջ։

Նոթբենակ պէդէքէ չէնո-ֆիլոնը։—Մարդկային նորաբնակ տեղերի շինութեան վերաբերմամբ առողջապահական կանոնի պահանջումները կարելի է երևին չափազանց տեսական· բայց չէ՞ որ տեսութիւնը (teopia) միշտ յառաջ պիտի երթայ գործնական կրթութեամբ և հասնի կատարելութեան, ուշք չդարձնելով նորա վերայ թէ կարելի՞ է արդեօք նորա անշուշտ գործադրութիւնը թէ չէ։ Այսպէս և այստեղ առողջապահական կանոնը ցոյց է տալիս միջոցներ և ճանապարհներ, որոնք անհոգ են կացուցանում առողջապահական պայմանների բարւոքումն, իսկ նորա, խորհրդների գործնական գործադրութիւնը յառաջանում միայն աստիճանաբար· օրքան որ կարելի է տուած պայմանների համեմատ նոր քաղաքներ

կամ ընակութիւն հաստատելու միջոցին պէտք կայ տալ այն անյարմարութիւններից, որոնք կապակցութիւն ունին հին քաղաքների շինութեան հետ։

Պէտք հեռանալ նեղ փողոցներից և ըստ կարի մերժել տների տափարակ կարգերը։ Ազատայ մարդկային ընակութիւնները չպէտք համապատասխանեն մեր այժմեան քաղաքների մասին եղած հանգամանքներին, և շատ շուտով կնմանին քաղաքներից դուրս շինուած տների խմբին, այնպիսի մեծ տների մասին, որոնք նման են գինուորանոցներին և որոնք այժմ իրաքանչիւր քայլում պատահում են, ասք չկայ՝ որ ըստ կանոնի պիտի ընդունուած լինի երկյարկանի տուն, որի մէջ կարելի է տեղաւորցնել շորս ընտանիք, իւրաքանչիւր տունը շրջապատուած պիտի լինի սրբահներով և այգիներով, փողոցները պիտի լինին լայն և լաւ սալայատակած, երկու կողմերից պիտի գտնվին առանձին լայն սալայատակներ (тротуаръ) ծառերով տնկուած, աւելի լաւ է նաև շինել փողոցների մէջ ծառատտաններ (бульвары)։ Քաղաքի կենդրոնում—կառավարչական շինութիւններ, ուսումնարաններ, համալսարաններ, թատրոններ վաճառատրողներ և այլն։ Դրա պէտք ցրուած լինին քաղաքի երկայնութեամբ փոքրիկ խմբերով, որպէս զի բնակիչները կարողանան տարածուել։ Բոլոր հասարակական շինութիւնները պիտի շրջապատուած լինին այգիներով։ Այս ցրուեալ մասնաւորական անտեսական կենդրոնների հաղորդակցութիւնը փողոցների հետ, ըստ կարի պիտի թեթեւանայ ձիաքարշ—երկաթուղիով և էլն։ Վաճառականական շինութիւնները, որոնց տպականած օդից, ջրից կամ գետնից անկարելի է փախչել, պէտք քաղաքների շրջակայքից դուրս հանել։ Ջրանցքներ, աղբիւրներ և լաւ առուակներ միշտ կարևոր են ամեն քաղաքի համար։

Առաջին անգամ այսպիսի նախագիծը կերևայ չափազանց գաղափարական, բայց գործնականի մէջ մենք բոլորովին հեռու չենք նորա կատարելուց։ Արդէն շատ տեղերում փորձ են փորձում հաստատելու քաղաքներից դուրս առանձին դաստակերտներ, որոնք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ մեր քաղաքի նկարագրած գաղափարին հասնելու նպատակը, բայց ախոռ՝ որ այս դաստակերտները իրենց նեղկայ դրութեամբ չեն կարող քաղաքների տեղը բռնել։ Նրանք այնպէս են շինուած, որ միայն ընակիչների փոքրիկ մասը կարող է ամբողջ տարի նրանից օգուտ քաղել, միշտ հաղորդակցութիւն ունենալով քաղաքների հետ։

Որպէս զի դաստակերտները փոքր առ փոքր ձեռք բերին իրենց անկախութիւնը և չճնշվին քաղաքներ իրենց այժմեան դրութեան մէջ, հարկաւոր է տեղափոխել այնտեղ հասարակական շինութիւնները, և դարձնել հասարակական կեանքի արհեստի գիտութեան և կառավարութեան փոքրիկ կենդրոնները։ Այնու ամենայնիւ նոցա շինութեան միջոցին պէտք հետևել ընդհանուր նախագծին, և շինել այնպէս որ քաղաքի ամենաւորը մասին ևս դիւրամատչելի լինի։ Այսպիսի դաստակերտները

լինելուց յետոյ կարելի էր հիմնել հաստատուն բարեգործական ընկերութիւններ յօգուտ տեղական հասարակութեան։

Նոր փողոցներ և նոր թաղեր, որոնք անմիջապէս միանում են քաղաքի հին մասերի հետ, երբէք չեն կարող հասնել արտակեդրոնացման (децентрализація) այն աստիճանին, և հետևաբար այն բարձր առողջապահական նշանակութեան, ինչպէս են պատահականների թաղերը, որովհետև գետինը անմիջապէս մօտ լինելով քաղաքներին՝ սաստիկ թանգ է և շատ հասկանալի է, որ նորա տէրերն են թանդացնում նորան։ Թէպէտ և հասարակաց օգտի համար կարելի է անձնական իշխանութիւն սահմանափակել, բայց այս սահմանափակումն այնպէս չէ կարելի անել, որ գետնի գինը բոլորովին ցածանայ։ Շատ ցանկալի կլինէր, եթէ նոր փողոցներ շինուէին պատվէլեանի ձևով (система), այսինքն, այնպէս որ բոլոր տները լինեն մի կամ երկյարկանի՝ ճակատի կամ կողքի պարտէզներով, որոնք ապահովացնումեն օդի հոսումը և փողոցային փոշուն դէմ արգելք են լինում։

Եթէ որ այս վերոյիշեալ պայմանները դժուար է կատարել՝ այն ժամանակ պէտք միայն քիչով բաւականանալ, բայց այնու ամենայնիւ տների բարձրութիւնը փողոցների լայնութիւնից աւելի չպիտի լինի, բայց ներքին ճակատի պարտէզների համար պիտի որոշուած լինի մի որոշ մեծութեամբ տեղ։ քակի մէջ եղած շինութիւնների բարձրութիւնը քակի լայնութիւնից բարձր չպիտի լինի։ և նոյն իսկ շինութիւնը պէտք է մի որոշ հեռաւորութեան վերայ լինի մեծ շինութիւնից և մերձակայ տներից։ վերջապէս փողոցներ շինելու ժամանակ պէտք աշխատել, որ արևի ճառագայթները ազատ թափանցին, ամենից լաւ է ձգել գլխաւոր փողոցները հարաւարևելքից դէպի հիւսիսա—արևմուտք, կամ թէ հարաւ—արևմուտքից հիւսիս—արևելք։

Քաղաքների պատ. Խօսենք այժմ մեր քաղաքների մի յատկութեան վերայ, որը սաստիկ վատ ազդեցութիւն ունի բնակիչների առողջապահական կազմուածքի վերայ։ Արհեստական, վաճառականական և ուրիշ արուեստների զարգացումն, նպաստելով քաղաքների հին կենդրոնական մասերը լաւացնելու և զարդարելու և շատ հին շինութիւնները ոչնչացնելու մասին ընդհանուր ձգտումը, բոլորն ևս ցոյց են տալիս բնական տեղերի կարգաւորումն։ Միշտ և ամեն տեղ ի հարկէ լինում էին քաղաքի հարուստ և աղքատ մասեր, բայց վերջին ժամանակումս մեր մէջ ընդհակումութիւն բաւական զօրացաւ։ քաղաքների հարուստ մասերը միշտ զարդարուած են լինում նոր նոր փողոցներով, գեղեցիկ և ճոխ տներով և պարտէզներով, իսկ աղքատը մնացել են լինում գրեթէ այն բնակիչների, որոնք աստիճանաբար դուրս են գալիս լաւ փողոցներից բնակարանների գինը բարձրանալու պատճառով, այստեղ ապրումեն ամբոխ աստիճան և աշխատաւոր մարդկանների դասը, որոնք հարկադրուած են բաւականանալ միայն էժան գնով եղած տների մէջ բնակուելով։ այստեղ բնակութիւնը շատ խիտ է։ տներն ու փողոցները սարսափելի ցեխոտ, այս-

տեղ սովորաբար ծնանումեն համաճարակ հիւանդութիւններ և նոքա այստեղ յափշտակումեն բաւական զոհեր, ուստի և նրանց վերայ պէտք ուշադրութիւն դարձնեն մարդկութեան ճշմարիտ բարեկամները—քաղաքային կառավարութիւններ։

Այս պակասութիւնը փոքր ինչ կարելի է նուազեցնել հրատարակելով առողջապահութեան համար սահմանուած ոստիկանութեան կողմից զգուշացումներ, տների և սրահների մաքրութեան վերաբերմամբ նոյնպէս շատ հոգ պիտի տանել առատօրէն ջուր մատակարարելու համար, որպէս զի քաղաքի աղտոտութիւնները և անմաքրութիւնները ժամանակ առ ժամանակ մաքրուին, բայց աւելի լաւ օգնութիւն այն կարող է լինել, որ աղքատ խաղերի կենսական պայմանները փոխեն։ Այս չարիքից գլխաւոր պատճառը բանում է կայանում, որ այժմեան հանգամանքներին նայելով քաղաքային բնակիչների մեծ մասը չէ կարողանում գտնել միևնոյն միջոցներով առողջապահական կանոններին համապատասխան բնակարաններ։

Այս թշուառների ապաստանարանը լինում են ներքնատունները, սրահի մութ բնակարանները, վերնայարկերը, հեռացած խաղերի ցեխոտ, կիսատ ներկ տները, իջևանների անտանելի ծակ ու պուճախները և։ Բացի սոքանից տէրերը հարստահարումեն ամենանգութ կերպիւ այս խեղճերին, նրանք վճարումեն իւրեանց թշուառ բնակարանների մասին անհամեմատ աւելի թանգ, քանիմ հարուստ մարդիկ իւրեանց յարմար ընդարձակ լուսաւոր բնակարանների համար։ Ուրիշ հանգամանքներում կարող էին նրանք ունենալ լաւ և առողջարար բնակարան։ Այդպիսի բնակարանների բացակայութիւնից յառաջանում քաղաքացիների աշխատաւոր դասի, արհեստաւորների, ցած աստիճանաւորների թշուառութիւնը, և։ Նորանից կախում ունի նաև շատ քաղաքների մահկանացուների թիւը և անկասկած՝ նրանց առողջապահական մասը բարւոքելու համար պէտք բոլորովին անհետացնել երկրիս երեսից ցեխոտ թաղերը, և տալ նրանց փոխարէն իւրեանց պահանջմունքներին և միջոցներին յարմար բնակարաններ։

Այդպիսի համաբ առողջ բնակարաններ շինելու համար։ Որովհետև բնակիչների այն դասը, որի մասին մենք խօսում ենք, չէ կարող շինել իւր համար նոր տներ, ուստի յօգուտ հասարակական առողջապահութեան պէտք օգնել նորան ուրիշ ճանապարհով։

Այս օգնութեան գեղեցիկ նպատակը հասկանալով բարեգործ անձինք, որոնց վաղուց հաստատած են ընկերութիւններ քաղաքային աղքատ դասի բնակարանները բարւոքելու նպատակով։ Նրանք շինում են տներ աղքատների համար, չառնելով բոլորովին այս մասին ծախսուած կրամագլխի տոկոսը։ Բայց շուտով համոզուեցան, որ բարի նպատակին չէ կարելի հասնել շուտով՝ միայն մարդասիրական ընկերութիւններով, որովհետև բարեգործական ընկերութեան միջոցները բոլորովին բաւական չեն, որ խեղճ բնակիչների մի աննշան մասին մատակարարեն լաւ բնակարաններ։

Եւ որովհետև աշխատաւորների տները պիտի վճարեն ծախսուած դրամագլխի սովորական տոկոսը, առանց ծանրաբեռնելու բնակիչների նեղմտականը, ուստի միաք ծագեցաւ, որ այս բոլորը գործ դնեն առևտրական սկզբունքի վերայ, և գրաւեն դէպի այն՝ դրամագլուխ ունեցող անձերին։

Հարցին այդ կէտից նայելով՝ աւելի ճիշդ և մեծ յառաջդիմութիւն կարելի է յուսալ քան թէ բարեգործական սկզբունքների վերայ հիմնուելով։ Անգլիական շատ քաղաքներում շինած են արդէն շինութիւններ այս հիման վերայ, և հաշարաւոր չունեւոր մարդիկ ստացած են գեղեցիկ բնակարաններ։ Շատ գործարանատէրեր շինեցին իրենց հաշուով աշխատաւոր մարդիկների համար Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Զուիցերիայում բնակարաններ և մինչև ցայսօր ոչ ոք նրբանցից չէ դանգատած այդպիսի ձեռնարկութիւնների տնտեսական կողմի մասին։ Պարտականութիւն ենք համարում յայտնել դրամատէրերին, որ իրենց ուշադրութիւնը դարձնեն այն բանի վերայ, որ չունևոր դասերի համար բնակարանների շինութիւնը կարելի է հիմնել առևտրական հիման վերայ, հետևաբար դրամատէրերը մեծ ծառայութիւն արած կլինեն հասարակաց առողջութեանը՝ ոչինչ նեղութիւն չքաշելով նրանից, եթէ հիմնած լինէին հասստատուն հանգանակական (акціонерный) ընկերութիւններ, որոնք պիտի աշխատէին ոչնչացնել այժմեան խեղճ էքսպլուատորների բնակարանները, որոնք մեր հասարակական կեանքի կենդրոնների ամօթը պիտի վերջացնէին, և պիտի լինէին լաւ, առողջարար թէև բոլորովին հասարակ բնակարաններ անգլիական ձաշակով, կամ մի ուրիշ տիպով, որը յարմար կերևար Թագաւորական և քաղաքական ընկերութեան կառավարութիւնները ևս չպիտի լռեն այս մասին։ Այժմեան ժամանակում այնքան պարզուկ ժողովրդական կեանքի առողջապահական պայմանների բարելաւման նշանակութիւնը, որ ամեն տեղ գործ են ածվում հարիւր հազարներ և միլիոններ այդպիսի շինութիւնների համար, որոնք ծախսուած դրամագլխի տոկոսն ևս չեն բերում; բայց նրանք այն օգուտն են բերում, որ կարողանում են բնակիչների հիւանդութիւնները և մահը նուազեցնել (քաղաքների ջրանցքներ ևլն)։ Բնակարանական յեղափոխութիւնը պատկանում է նորա—հասստատ ընկերութիւնների գործունէութեանը, ուստի ցանկալի կլիներ, որ ինչպես ընկերութիւնները նոյնպես և տէրութիւնը նպաստէր բնակարանների շինութեանը եռանդով։ Այս պատճառով հասարակական օգնութիւնը կարող է լինել զանազան ձևով, օրինակի համար դիջանելով տան գինը կամ բոլորովին բաշխելով։ տալ շինութեան հողեր՝ վերոյիշեալ նպատակի համար կազմուած մասնաւոր ընկերութիւններին, և միևնոյն ժամանակ եթէ կարելի է փոխատուութեամբ արուի դոցա Թագաւորական և ընկերութեան գումարներից բաւականաչափ դրամագլուխ ամենաքիչ տոկոսով, ևլն։ Մինչև անգամ շատ քաղաքներ իրենք պիտի աշխատեն շինելու առողջարար տներ խեղճ բնակիչների համար։ Ընկերութեան գումարից այդպիսի ծախս տները՝ ժողովրդեան մի դասի

վիճակը բարւոքելու համար, շատ մեծ նշանակութիւն ունի հասարակական առողջութեան վերաբերմամբ. բացի սորանից ծախսուած դրամագլուխը բաւականաչափ շահ բերելով, օգուտ կլինէր թէ նոյն ինքն ընկերութեան և թէ աղքատ բնակիչներին։ Տէրութեան և մասնաւոր քաղաքների մասնակցութեան մի քանի դէպքեր. բանւորների բնակարանները շինելու վերաբերմամբ, արդէն յայտնի են, ինչպէս Նապոլէօն Գ. Մխիթարեան ընկերութեան տուած է Թագաւորական դանձարանից բաւական աջակ գումար առանց տոկոսի. Պիէմիայում այդպիսի մասնաւոր ընկերութիւնները պահպանւում են քաղաքների ունևոր բնակիչների հաշւով։ Անգլիայում 1866 ից սկսած գտանվում Պարլամենտից դրուած կանոն մասնաւոր ընկերութիւններին, որոնք պարապում են էժան գնով բնակարաններ պատրաստելու աշխատաւորների համար, միայն թէ փոխ տրուի տէրութեան գումարից 40 տարի ժամանակով, վերջապէս 15 տարի. սորանից առաջ Լիվերպուլ քաղաքը գնեց 21000 ֆունդ ստերլինգով քաղաքի բոլոր աշխատաւորների շինուելիան հողերը, և այժմ այս հողի վրայ շինուած են ահագին քանակութեամբ բնակարաններ։ Այսպիսի օրինակներին լիովին արժանի է հետևելու։

Ընակուած տեղերի ջրի մատակարարութիւնը.—Ամենագլխաւոր հանգամանքներից միևը այն է, որ ինչպէս նոր բնակութիւններ հաստատելու միջոցին, նոյնպէս և առողջապահական պայմանների բարւոքումն հին քաղաքներում կազմուած ջրի առատ մատակարարութիւնը, բայց տխուր որ մինչև այժմ առողջապահական այս հիմնաւոր պահանջմունքը անկատար է մնացած։ Շատ անգամ ամբողջ մեծ գիւղում չէ գտանվում ջրհոր, ջուր բերումեն հեռու եղած աղբիւրից և պահումեն ամբողջ օրերով հոտած տեղերում, կամ թէ մի որևէ տխտից, որի մէջ ժողովուրդն կաւախառն անձրևային ջուր։ Բայց քաղաքները ևս շատ անգամ ունենում ջրի վատ մատակարարութիւնը, ինչպէս նորա օրպիսութեան վերաբերմամբ նոյնպէս և քանակութեան։

Ջրի օգտուածը.—Աղբիւրների ցուցիչները— մարդկային բնակութիւնները հաստատվելուց առաջ, պէտք հոգս տանել նորա համար լաւ ջուր ձեռք բերելուն։ Եթէ չկան մերձակայ տեղերում բնական աղբիւրները պէտք գտնել ջուր գետնի խորքերում։ Աղբիւրների կամ գետնի ջրի գտնելը երբեմն շատ դժուարութիւն է լինում, և կան այնպիսի մարդիկ որոնք մասնաւորապէս այս բանով են զբաղուած, զոր օրինակ, Փրանսիայի Պատամէլ վանահայրը ևն. որոնք հնչակուեցան։ Սորերկրնայ աղբիւրակներ գտնելու համար պէտք նախ ինկատի ունենալ գետնի շերտերի կազմուածքը և յատկութիւնները և բուսականութեան որպիսութիւնները, ամենից աւելի կարելի է նոցա գտնել, խիտ հիւթալի խոտերով ծածկուած ցած տեղերում։ Խեցգետնային, կրի և կէիպերովեան կազմութիւնները յարմար են աղբիւր յառաջացնելուն։

Սորերկրնայ աղբիւրները գտնելու համար դործ են ածում Նորտոն-

վեան գէրմանական ջրհան մեքենայ, որից մեծ օգուտ քաղեցին Անգղիացիք Հաբեշստանցւոց դէմ եղած պատերազմում։

Մասնաւոր ջրի կոնսորցիումը ամեն բանէ զոհաբերութեան համար։—Ջրի մատակարարութեան զանազան միջոցներին դիմելուց առաջ, ասենք մի քանի խօսք հասարակաց մէջ տարածուած սխալ կարծիքը հերքելու համար, որը կարող է ունենալ վատ հետևանք հասարակական առողջութեան մասին, ղրը օրինակ, երբ խօսւում են բնակուած տեղերի ջրի մատակարարութեան և նորա առողջապահական նշանակութեան մասին, սովորաբար հասկանում միայն խմելու և կերակուր պատրաստելու ջուր, իսկ մարմնի սպիտակեղէնների և ամաններ լուանալու ջրին ուշադրութիւն չեն դարձնում։

Ոչքան ևս չբացատրելով խմելու ջրի մաքրութեան հոգս տանելը, հարկաւոր եմ համարում ցոյց տալ այն բանը, որ ցեխոտ ջրի գործածութիւնը զանազան տնտեսական բաների համար այնքան վտանգաւոր է և մինչև անգամ ևս աւելի վտանգաւոր, քան թէ խմելու համար գործածուած ապականուած ջուրը, վերջինից գլխաւորապէս վախենում են նորա համար, որ շատ բժիշկների կարծիքով նորանով կարելի է տանել գործածութիւնների մէջ համաճարակ հիւանդութիւնների (տիֆ և խոլեր) սերմերը, որոնք մնած են նորա մէջ գետնից ինչպէս որ կարծվում է։ Այս երկիւղը բոլորովին հիմնաւոր չէ, պէտք է միայն յիշել թէ վարակիչ հիւանդութեան սերմերը եթէ գտանվում են հողի մէջ, պէտք անցնի ոչ թէ միայն խմելու ջրի մէջ այլև մեծ քանակութեամբ օդի մէջ ևս, և որովհետև իւրաքանչիւր օրուայ մարդուս ներշնչած օդը մի քանի հազար անգամ շատ է ջրի քանակութիւնից, որը նա գործ է ածում խմելու կամ կերած կերակուրների մէջ, այն ժամանակ աւելի ուղիղ կլինի ասելը թէ հիւանդութեան յառաջացնող նիւթերը ընդունվում են աւելի մարդուս թոքերով քան թէ ստամոքսով։ Հետևաբար յատակների և ամանների ևն լուացուած ջուրը գոլորշիանալով և հաղորդելով օդին վնասակար նիւթեր, կարող է մեր առողջութեան աւելի վնաս հասցնել, քան թէ խմելու ջուրը, ուստի գործածութեան ջուրը պիտի լինի այնքան աւելի մաքուր որքան խմելու համար գործածուած ջուրը։

(Թարգմանութիւն) Գէորգ. ՃՀ. Ա. Լասպրանի Ռասանոց

ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ։

ԹԷ ՈՐՔԱՆ ՊԷՏՔԷ ՊԱՐԱՊԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ.

1, Աշակերտների պարապմանց տեւողութիւնը իւրեանց հասակի եւ զարգացման համեմատ։ — 2. Դասամիջոցներ (перемѣны)։ — 3, Դասի տեւողութիւնը. ստորին դասարաններում աշակերտների հանդիստը դասերի միջոցում (ժամանակ)։ — 4, Դասամիջոցի տեւողութիւնը։ — 5, Դասամիջոցում քաղած օդուտը։ — 6, Տնային պարապմունքների տեւողութիւնը։ — 7, Տնային պարապմունքների կապը դասարանականի հետ։ — 8, Վարժապետների համաձայնութիւնը նրանցից իւրաքանչիւրի աշակերտներին տուած աշխատութիւնների (դասերի) քանակութեան մասին։

Մտաւոր պարապմունքներով շատ կամ քիչ պարապելու կարողութիւնը՝ կախուած է ինչպէս մարդիս ֆիզիքական եւ հոգեկան այժերից, նոյնպէս եւ զգեստորաբար նորա մտաւոր պարապմունքներին սովոր լինելուց։

Անչափահաս եւ մտաւոր երկար պարապմունքներին անսովոր տղաներից ես պահանջվումէ այնքան քանք պարապմունքները շարունակելու, (ինչպէս երկու երեք ժամ՝), ինչքան որ չափահաս եւ մտաւոր աշխատութիւնների սովոր երիտասարդից պահանջվումէ շարունակ հինգ եւ վեց ժամում։

Սորանից երեւումէ, որ անհիմն կլինէր երեխաներին եւ չափահաս աշակերտներին մտաւոր պարապման համար հաւասար ժամանակ նշանակել, որովհետեւ չափահասներն ամրապնդուելով՝ սովոր կլինին մտաւոր աշխատութիւններով պարապելու։

Եւ որովհետեւ աշակերտների այժերը զօրացնելը եւ երկարատեւ մտաւոր զբաղմունքներով պարապելուն վարժացնելը՝ լինում հետզհետէ (սակաւ առ սակաւ)։ Ուստի եւ մտաւոր զբաղմունքներով պարապելու միջոցները. պէտք աստիճանաբար նշանակենք։ Ինչքան որ աշակերտները փոքրահասակ են եւ ինչքան որ նորա քիչ են սովորած մտաւոր գործունէութեան, այնքան էլ ամենօրեայ մտաւոր զբաղմունքների ժամանակը պէտք քիչ լինի. եւ ինչքան որ նոքա կը կարդուրուին եւ կսովորեն մտաւոր զբաղմունքներով պարապել, այնքան այս ժամանակը պէտք կամաց կամաց աւելացնել։

Օրթ, ուրթ տարեկան երեխաներին բաւական է երկու ժամ միայն պարապել ուսումով. իններից տասը տարեկան աշակերտներին ուսումնարանում պարապելու համար կարելի է նշանակել երեք ժամ՝։ Սորանից մի քիչ մեծ՝ 11—13 տարեկան աշակերտները կարող են պարապել 4 ժամ՝. իսկ այն հասակ առած աշակերտները, որոնք միջնակարգ ուսումնարաններում եւ նոցա բարձր դասարաններումն են լինում՝, կարող են դասարանում՝ օրական 5 եւ երբեմն մինչեւ 6 ժամ՝ պարապել։ *)

(*) Այն դասարաններում ուր աշակերտներին պարապելու համար քիչ ժամանակ է նշանակուած, աւելհասակ աշակերտները վերջին դասերից անմիջապէս յետոյ շատ շատով տուն են գնում։

Այսպէս պարապմունքները աշակերտների հանգիստի, սովորութեան և մտաւոր աշխատութեան համապատասխան լինելն այն օգուտ ունի, որ աշակերտները չեն ձնշուի իւրեանց համար անսովոր մտաւոր պարապմունքների ժամանակ. և դպրոցը չվնասելով աշակերտների առողջութեան՝ կատարած կլինի այն խնդիրը, ի հարկէ այն ժամանակ՝ երբ կրթութեան համար նշանակուած ժամանակը անօգուտ չի անցնիլ աշակերտների համար, այլ ընդհակառակն կը նուիրուի օգտակար ուսումնական պարապմունքներին։ Ցայտնի է որ անհամեմատ օգտաւէտ է եթէ մանուկը դպրոցում 2, 3 ժամ մնայ և այդ ժամանակ ուսումով պարապի, քան թէ նոյն ուսումնարանում 5—6 ժամ, և այդքան ժամանակում ևս իսկապէս 2 և 3 ժամից աւելի չը պարապի։ Վերջին դէպքում աշակերտն ստանում չափազանց վնասակար սովորութիւն՝ որ է անգործ ժամանակ անցկացնել, նստել և ոչինչ չանել։

2. Բայց և վերևում տարբեր հասակ ունեցող աշակերտների պարապմունքների համար նշանակուած ժամանակը՝ ի հարկէ ծանր և տաժանելի կլինէր՝ եթէ որ նոքա անընդհատ այդ բոլոր ժամանակում պարապէին— նոյնպէս՝ երկու երեք ժամ անընդհատ պարապելը ոչ միայն անչափահաս տղայի համար տաղտկալի է, այլև չափահասի համար. — Մի որոշ ժամանակուայ գործունէութիւնից յետոյ՝ գործարանական և հոգեկան ոյժերը պէտք որ հանգստանան, իսկ երբ որ այս պահանջը չէ կատարվում, չլսուվում, թուլանում են. կամ՝ մինչև անգամ բոլորովին այլ ևս չեն կարողանում շարունակել իւրեանց գործունէութիւնը. Երբ մարդս մի քիչ հանգստանում է, նորից կարողանում է շարունակել իւր աշխատութիւնը։

Սորանից յայտնի երևում է, որ դասամիջոցներն անհրաժեշտ են, որոնք նշանակուած են աշակերտներին հանգստեան համար։ Դասամիջոցները հանգստեան համար լինելով՝ միևնոյն ժամանակ աշակերտների պարապմունքները դպրոցում դասերի բաժանուելուն մի միջոց են դառնում։

3. Դասը՝ ոչ շատ կարճ և ոչ շատ երկար պիտի տևի, որովհետև երբ ժամանակը կարճ է լինում՝ ուսուցիչն է նեղվում. իսկ երբ երկար, այն ժամանակ տաղտկալի է դառնում։ Բացի դորանից, երբ որ դասը շատ երկար ղոր օրինակ ժամ ու կէս կամ երկու ժամ է տևում, միշտ օգուտով չեն անցկացնում ժամանակը, և այսպիսի դասերն առհասարակ այնքան մեծ օգուտ չեն տալիս աշակերտների. պարապմունքների յաջողակութիւնը կախուած է ոչ թէ միայն ժամանակից այլ և ինչ եղանակով շարունակուելուց։

Սովորաբար ուսումնարաններում իւրաքանչիւր դասին մի ժամ են նշանակում։ Ազգային լուսաւորութեան նախարարին պատկանող ուսումնարաններում (օրինակ գիմնազիաներում) դասին 59 րոպէն բաւական է համարվում։

Իսկապէս հարկաւոր էր, որ դասի տևողութեան ժամանակը համապատասխան լինէր աշակերտների հասակին. ինչքան որ աշակերտները փոք-

բաշխակ են՝ այնքան աւելի կարճ պիտի լինին դասերը. օրինակ 7—8 տարեկան երեխաների համար կարելի է նշանակել ամեն մի դասին կէս ժամ, կամ մօտ 40 րոպէ։

Բայց դասերի տեւողութեան զանազանութիւնից՝ ուսումնարանի բոլոր դասարաններում կը յառաջանային կարգապահական շատ անյարմարութիւններ։ Այսպէս օրինակ փոքրաշխատակ աշակերտներն իւրեանց դասը վերջացնելով՝ դասամիջոցին դուրս կը գան դասարանից և կը խանգարեն իւրեանց աղաղակներով բարձր դասարանների պարապմունքը։ Սակայն ուսուցչէը ստորին դասարաններում, ինչպէս վերևն ասացինք, երբ կը նկատի երեխաների տաղտկութիւնը, յոգնածութիւնը, դասի ժամանակ նոցա մի քիչ հանգիստ պիտի տայ. պիտի առաջարկէ նոցա մի քանի անգամ վեր կենալ, նստել, մարմնամարզական մի քանի տեսակ վարժութիւններ անել։ Երեխաները մի քիչ հանդստանալուց յետոյ, պիտի շարունակեն իւրեանց պարապմունքները։

4. Դասամիջոցն էլ ոչ երկար և ոչ կարճ պիտի լինի. երբ շատ կարճ է լինում ժամանակը՝ նպատակին չէ ծառայում. իսկ երկար դասամիջոցները շատ ժամանակ են խլում։ Դասամիջոցների համար պէտք է նշանակել այնքան ժամանակ՝ որ աշակերտները կարողանան զուարթանալ, հանգստանալ. և նորոգելով իւրեանց ոյժերը պատրաստուեն հետևեալ դասին։ Ինչքան որ աշակերտները շատ երկար ժամանակ դասի են նստում և ինչքան որ առաւել յոգնած են լինում, այնքան աւելի երկար ժամանակ է հարկաւոր դասամիջոցի համար. ա. դասից յետոյ 5—10 վայրկեան դասամիջոց՝ բաւական է. բ. դասից յետոյ 10—15 վ. է. դասից յետոյ նախաճաշի ժամանակ (որ մօտ 12 ժամին է լինում) պէտք դասամիջոցն աւելի երկար նշանակել, առ նուազն կէս ժամ։

Այդ ժամանակը աշակերտները կարող են նախաճաշել և հանգստանալ, այնքան՝ որ առանց դժուարութեան կը կարողանան շարունակել մնացեալ դասերը։ Իսկ ը. դասից յետոյ դասամիջոցի համար կարելի է նշանակել 5—10 վայրկեան *)։

5. Դասամիջոցներն աշակերտները պէտք է գործածեն հանգստեան համար։—Սովորաբար աշակերտները դասամիջոցներին դասատեղից դուրս են գալիս. (բացի դասատեղից (օրապահ), որը պէտք է հոգս տանէ դասարանի մաքրութեան և օդափոխութեան համար,) դահլիճը (залъ) կամ միջանցքը (корридоръ). և կամ՝ լաւ եղանակին բակ են դուրս գալիս։ Ուր ոմանք զբօսնում են, ոմանք ևս մարմնամարզական կրթութիւններ են անում. ոմանք ևս կարճատև խաղեր են սկսում զօր. խաղում են գնդակ **)։—

(*) Այստեղ նշանակուած է դասամիջոցների միջին թիւը. Զանազան ուսում նարաններում դասամիջոցները մի եւ նոյն չեն, այլ տարբեր։

(**) Օգտակար է՝ որ ուսուցիչը կամ վերակացուն սովորցնէ աշակերտներին իւր գի տեցած երեխայական խաղերը։ Երեխաներն անշուշտ յայտնի միջոցում օգտում են քաղել իւրեանց տեսած խաղերից։

Մէկ խօսքով բոլորը հանգիստ են տալիս ինչպէս իւրեանց ֆիզիքական այնպէս և հոգեկան ոյժերին, որոնք յոգնած կլինին դասարանում ունեցած պարապմունքից։

Ուսուցիչը կամ վերակացուն պէտք է ուշադրութիւն դարձնէ, որ աշակերտները նպատակայարմար օգուտ քաղեն դասամիջոցից։ Առողջ և կայտառ երեխաները սովորաբար սիրամեն դասամիջոցներին դուրս դալ դահլիճ կամ բակ՝ հանգստանալ ժամանակից օգուտ քաղելու համար։ Իսկ թոյլ՝ ինչպէս և վախկոտ աշակերտները շատ անգամ ակամայ են դուրս գալիս դասարանից։ Նոքա առաւել լաւ են համարում դասամիջոցին իւրեանց տեղը դասարանում մնալ։ Ահա այսպիսի աշակերտներին ուսուցիչը կամ վերակացուն պարտական է առաջարկել դուրս գնալ զբօսնելու և թարմ օդ ծծելու։

Այնպէս ևս պատահում է, որ աշակերտներից ոմանք, հենց որ սկսվում է դասամիջոցը, փոխանակ հարկաւոր հանգիստ առնելու, առնում են գիրքը և պատրաստում են հետևեալ դասը։ Այս բանն այնքան ցանկալի չէ, որովհետև բացի նորանից՝ որ վնասում է առողջութեան, դասամիջոցի տալիք օգուտը վատ է ներգործում ուսման վերայ։ Աշակերտը դասամիջոցին հանգստացած չլինելով, յոգնածութիւնից չէ կարող լաւ ուշադրութիւն դարձնել և աշխոյժ ունենալ դասի ժամանակը։

Տուած դասերը, իսկապէս՝ աշակերտները պէտք է որ՝ տանը պատրաստեն, և ոչ թէ՝ յոյս դնեն դասամիջոցների ժամանակ պատրաստելու վերայ։

6։ Հարկաւոր է մի քիչ ևս աշակերտների տանը ինչքան պարապելու մասին ասել։

Որպէս զի ուսումը չվնասէ աշակերտների առողջութեանը՝ և չձնշէ նոցա հոգեկան ոյժերը, անհրաժեշտ է՝ որ ոչ միայն ուսումնարանական՝ այլև տանը կատարելիք պարապմունքների տևողութիւնը համապատասխան լինէր նոցա դործարանական և հոգեկան ոյժերին։

Կարծիք կայ՝ որ աշակերտներին տրուած պարապմունքները տանը պատրաստելն օգնում ուսման յաջողութեանը։ Բայց պէտք է չափաւոր օգուտ քաղել այդ միջոցից։ Զգէտք մոռանալ, որ երեխաներին՝ ուսումնարանի մէջ ունեցած պարապմունքից յետոյ՝ հարկաւոր է հանգստանալ և որ նոցա անհրաժեշտ է՝ մի քիչ աւելի շարժմունք անել։ Չպէտք է մոռանալ նոյնպէս, որ նպատակայարմար չի լինի չափազանց կարճել այն ժամանակը, որն որ անհրաժեշտ է երեխային շրջապատող անձերին (ծնողներին և բարեկամներին) նորա վերայ գաստիարակական և կրթական ազդեցութիւն ունենալու համար։

Տանն ունեցած պարապմունքների տևողութիւնը պէտք է կամաց կամաց շատացնել, և պէտք է միջին թուով՝ ուսումնարանում պարապած ժամանակի $^1/_3$-ի կամ հէսի չափ լինի։ այն՝ որ ուսումնարաններում՝ այս կամ այն հասակի համար բաւական է համարվում։—Այսպէս 8 տարեկան երեխաների համար տանը լինելիք պարապմունքը մի ժամից աւելի չպիտի

լինի։ 9—10 տարեկանների համար մեծ ժամուկէս։ 11–13 տարեկանների համար բաւական է երկու ժամ։ Միջին և բարձր դասարանների աշակերտները կարող են տանը 2—3 ժամ պարապել։

7. Ուսուցչի տանը պատրաստելու համար տուած աշխատութիւնները պէտք է սերտ կապուած լինին դասարանական պարապմունքների հետ, որովհետև դասարանական պարապմունքները նախապատրաստութիւն են աշակերտների տանը լինելիք պարապմունքների համար։ Ուսուցիչը այն ժամանակ աշակերտներին պարապմունք է տալիս, երբ իմանում է, որ նոքա լաւ են հասկացած այն տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են պարապմունքները վճռելու համար, և չեն հանդիպի անտանելի և տաժանելի դժուարութիւնների պատրաստելու ժամանակ։

Եւ կապակս ասելով՝ աշակերտների տնային ուսումնական պարապմունքը պէտք է լինի կամ լաւ ուսանել այն՝ ինչ որ բոլորովին հասկացել է և որ հարկաւոր է սովորել, և կամ այնպիսի վարժութիւններ անել, որոնց նպատակն է զարգացնել այն ունակութիւնը՝ (կարողութիւնը) որով կարողանայ յարմարացնել վարժութեամբ ձեռքբերած գիտութիւնները։ Եւ կամ այնպիսի աշխատութիւններ պիտի լինին, որոնց նպատակն է զարգացնել աշակերտներին մտաւոր մշակութեան ճանապարհով, նոցա ձեռքբերած ուսումնական նիւթերով։ Ուսուցիչն ոչ միայն պիտի կանգ առնէ բովանդակութիւն կազմող մտքերը բացատրելու, որոնք դասարանից դուրս եղած պարապմունքների էութիւնն ու բովանդակութիւնն են կազմում։ այլ նոյնպէս պիտի բացատրէ որքանութիւնը (պրіемъ)։ որով պէտք է նոքա կատարեն իւրեանց աշխատութիւնը։

Մի կողմ թողնելով արդէն գրաւոր վարժութիւնները, որոնց պատրաստելու համար երեխաները շատ անգամ կարօտում են բացատրութեան, թէ ինչպէս պէտք է կատարել աշխատութիւնը, նոյնպէս օգտակար է նոցա ցոյց տալ թէ ինչպէս պէտքէ սովորել, որևիցէ բերանացի սովորելիք բանը։—Հակառակ դէպքում՝ այսինքն երբ որ ուսուցիչը ցոյց չէ տալիս թէ՝ ինչպէս պէտքէ սովորել, այն ժամանակ երեխաները կորցնում են հարկաւոր եղածից անհամեմատ շատ ժամանակ։ և այն էս շատ անգամ ապարդիւն է լինում։

8.—Եթէ մի դասարանում ուսուցանում են մի քանի ուսուցիչներ՝ այն ժամանակ որպէս դի նոցա տուած տանը կատարելիք աշխատութիւնները բոլորը միասին շատ ծանրաբեռնած չլինին աշակերտ երեխային, և որոնց պատրաստելու համար շատ ժամանակ չհարկաւորուի նոցանից, պէտքէ ուսուցիչները համաձայնին՝ թէ ամեն մէկն ինչքան բան պէտքէ տայ՝ դասարանից դուրս՝ տանը պատրաստելու համար։ Այսպիսակ համաձայնութիւնները պէտքէ որ ուսուցչական պարբերական ժողովներում (մանկավարժական խորհուրդներում) լինին։

Գէորգ ծեր. Ա. Լաբունի Ռահանոզ

(Կաթողիկոսէ)

ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՆԱՅԵԱՆՑ։

ԴԱՐՁՆԱԼ ՁԱՅՆԱԳՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ։

Ձեր մանկական երգարանի վերաբերութեամբ Արարատում տպուած իմ նկատողութիւնները մէջ ցոյց տուած երգերիդ նշանաւոր սխալների դէմ ժողովանակ հաւանական ապացոյցներ բերելու, վայր ի վերոյ՝ կոշտ և կոպիտ արահօսութեամբ ծայրէ ի ծայր կամենուածք հերքել Մեղ-ի 25 համարում այն սկզբունքով, որ ես, առաջին՝ այբ բեն չիմանալով, և ձայնագրութեան տեսութեան հետ ծանօթ չլինելով, յանդգնել եմ ձեզ պէս մի հռչակաւոր կոմպոզիտէր (°) հերիւնակութիւն քննութեան առնել, և երկրորդ՝ որ ես, երկու անհրաժեշտ դիտութիւններից անտեղեակ լինելով, այն է, արդի մանկավարժութիւնից և ջութակ ածելուց, հետևապէս և ձեր աշխատութիւնը տպարդիւն ցոյց տալու մէջ, իմ կարողութիւնից վեր էր։ ԵՒ այդ իսկ ինքնահաւան մեծամտութեամբ ստորութիւն էք համարել ձեզ, քննութեան ենթարկել բնաւ երգարանի արժէք չունեցող հատկաւոր և անախորժ երգերի մի շարք, կանխապէս դուշակելով և այն կորստաբեր վտանգը, որից վերայ անաչառ քննադատը գրիչ խաղացնելով, պիտի զգէր ձեզ հացից։ Այո՛, մինչդեռ մէջը հացի խնդիր կայ այո՛, մինչդեռ այս տեսակ պարագաների մէջ հաց շնորհողին շողոքորթել կայ և հետևապէս դատարկաձեռն չգտանալ, ո՞վ լինէր արդեօք ձեր տեղ, որ այդպէս ընթացք չբռնէր իւր գրականական թերութիւնը օտարներից ծածկելու համար։

Իմ այբ բեն չիմանալը, և ձայնագրութեան տեսութեան հետ ծանօթ չլինելը ապահովաբար այն կէտից, որ ես չեմ ախորժել հաւանել առհասարակ երգերիդ մեծագոյն մասին, սխալ համարելով թէ նոցա ձայնը և թէ չափերի գործածութիւնը. այո՛, և չպիտի հաւանեմ հաստատամտութեամբ, մինչդեռ նոյն իսկ քաջահմուտ ուսուցչիդ խմբագրած երգերի գլխովին սխալ լինելը, և Եւրոպական նօտայի հոտ չառնելն անգամ, կապացուցանեմ առաջին, մի համբաւաւոր Հայկական և Եւրոպական ձայնագրագետի մեր ուսուցչապետ պ. Թաշճեանի նկատողութիւններով, որի ձեռքը անցնելով և սրբագրելով քո ձայնագրած երկու երգերը, աւելացնում մէկի տակին հետևեալ տողերը «կերևի որ այս երգը Եւրոպական նօտայէն առնելով, հայկականի վերածել է. քայց Եւրոպականը լաւ չուսանելով, հայկականի թարգմանութիւնն ալ սխալ է ըրած»։ Ուրեմն այս տողերը կարդալով բարեմիտ ընթերցողը չպիտի՞ եզրակացնէ, որ չորս տարուայ ընթացքում ջութակ ածել սովորել էք ոչ թէ նորա համար, որ օգուտ քաղէք երգեր ձայնագրելու ժամանակ, նոցա մէջ երբեմն պատահած անորոշ և անդիւրըմբռնելի կիսաձայները կանոնաւոր դուրս բերել, այլ թէ էջի և պարապ ժամանակներդ ածելով զուարճանաք և զուարճացնէք շուրջդ համախմբուած դողերիկ մանուկներիդ, ինչպէս դա բնական է ամեն մի զբօսասէր մարդկան, երկրորդ, երգիծաբան շաղփաղփութիւններով

հաւատացնումէք երգեցողութիւնից անտեղեակ ընթերցողին. որ ես « այլ կրքերից և զանազան պատճառներից դրդուած » առանց գնահատութեան, ձեր անգին աշխատութիւնը, ապագայ սերունդի զարգացողութեան այդ փրկարար միակ միջոցը, անվոզճմտաբար այն անպիտան գրեանց կարդն եմ դառել, որոց վերայ նայողը անախորժ հաճոյութեամբ պիտի զգուշանայ ընթերցասիրութենէն, և հետևապէս դորանով չօշափել եմ ձեր պատիւը, արատաւորելով նոյն և ի սիրեաս աշխարհի ժողովրդականացած ձեր հանրածանօթ անունը։

Փառքով բարձրանալու ցանկութիւնը արդիւնաւոր գործ է պահանջում. և այդպիսի մի փառաւոր գործ ունեցողին անարգողը, ամենից վատթար և անմիտ արարածը պիտի ճանաչել աշխարհի մէջ։ Երկրորդենք ուրեմն կարճառօտաբար ձեր գործի քննութիւնը, որպէս զի պարզուի, ոչ դուք փառքով բարձրանալու արժանաւորութիւն ունիք այս կէտում, և ոչ ես անարգվելու այնչափ, որչափ ախորժել է անարգել ձեր լեզուն և սիրտը։

Երգարանիդ մէջ դասաւորուած, մանկանց ճաշակին և հասկացողութեան ըստ ձեզ յարմար ոտանաւորները կարծեմ ձեր սեփհական հեղինակութիւնք չեն, այս կխոստովանիք, նոցա ունեցած արևելեան և արևմտեան երգերի ձայները՝ կարծեմ նոր ինորոյ ձեր գլուխը չէ ստեղծել. այս էլ կխոստովանիք. դոցա ի մի տեղ հաւաքման պատճառաւ՝ կարծեմ ծանր պարտուց տակ մնալով յերկրէ յերկիր չէք թափառել քաղցած ծարաւ, ինչպէս անուանեն հետաքրքիր ճանապարհորդները մի առարկայի առիթով. այս անշուշտ կխոստովանիք. ուրեմն ձեր աշխատութեան լոկ արդիւնք միայն մնում երկու բան, մին, այս երգից, այն տեսերից, երգեր արտագրել. և միւս, նոցա վերայ անսխալ ձայնանիշեր դնել. և եթէ վերջինք ևս սխալ են, ուրեմն ինձ տգէտ ու համբակ կոչելդ, ընդ նմին և այսպիսի մի գիրք քննադատելու պաշար չունենալ ճառոմնաբանելդ՝ անպատ և աւելորդ խօսքեր չէի՞ն։

Ահաւասիկ իբրև ապացոյց խօսքերիս, բաւական կհամարիմ դնել այստեղ ձայնագրագէտ ընթերցողին նկատելու, անսխալ համարած երգերիդ երկու օրինակ եթէ ոչ քսո-ին երգից, որոնք տպուած են երգարանիդ և դասագրքիդ մէջ. թէ որչափ ղանազանութիւն ունին միմեանցից ձայնանիշներով, դուք էլ նկատեցէք։

Երգարանէդ մէջ պատուած, երես 50։

Ձէ-ր. $^{6}/_{8}$



յո ՝ի՛ն ։ ՝ի ՛ո յո ։ ո ՛՚՝ի ՚՛՚՝ ո ։ ո
մե նիոյ երբ վայ լէ իւր քաղց ըի կ օ ըեր ։ երբ
՛ո յո ՝ի՛ն ։ ՝ի ՛ո յո ։ ո ՛ո յո ՝ի՛՚՝ ո ։
որ ծի ծառն լի քոյն զառ նայ երբ որ ծա ռե րն
ո ՛՚՝ի ՚՛՚՝ ։ ※ ՝ի ։՚՝ ՚ ՚՝՚ո ։ ՚
հագ նին տե րեւ ցան կամ տես նե լ զիմ
՚՛՚՛՚ ո ՚՝՚ո ։ ՝ի ՛ո ։ո ՝ի ՚ ։ո ՚ ։՚՛ ։՚ ։ո ։ ՚ ։՚
կի լի կեա աշ խարհն որ լինձ ե տուր ա րեւ
※ ո ՛՚՝ի ՚՛՚՝ ։
ե տուր ա րեւ ։

Դասագրքից մեջ պատճէն, էջէ 55։

Ձէ–ը։ 6/8

յո ։ո ՝ո ։ո ։ ։ո ՝։՛ո ։ո ։ո՛՚ ։ ո ։՛՚ ։ ո ՚՛ո՛ո ։
երբ որ բա ցուին դըռ ներն յոյ սոյ եւ մե ր երկ րէ ն
ո ։ո ։ո յո ։ ։ո ։ո ։ո ։ ։ո ։ ։՚՝ ։
վախ տայ ձը մեռն չըք նաղ եր կիր մեր Ար մե նիայ
յո ։ո ։ո ։ո ։ ։ո ՝։՛յո ։՚՛ո ։ո ։ ։ո ։
երբ վայ լէ իւր քաղց րի կ օ րեր երբ որ ծի-
՝ի՛՚՝ ։ յո ։ո ։ո ։ո ։ո ։ ։ո ։ ՝ի՛՚՝ ։ ։ո ՝։՛յո
ծառն լի քոյն զառ նայ երբ որ ծա ռերն հագ նի ն
՚՛՚՛՚ ։ ո ՚՝՚ո ։ ո ։՚՛ո ։ ։ո ՚՛՚՝ո ։
տե րեւ ցան կամ տես նե լ զիմ կի լի կեա
յո ։ ։ո ։ ։ո ։ ։

իրև քաջ Նոթայագէտ կամակորութեամբ պնդումէք թէ պէտքէ գրել առաջնական ֆոյից· կամենումէք ուղարկեմ միևնոյն երգի ձեր ձեռագրի պատճէնը, որ գրել էք դարձեալ երկրորդական ֆոյից· և այդ սխալ չէ· նոյնպէս և եթէ որ քառօրէն երգի $^3/_4$-ի չափով լինելը չէք ընդունում· այլ $^6/_8$-ով պէտքէ գրել, ասումէք, $^6/_8$-ով գրել էք այն պատճառաւ, որ միջի աւելորդ ձայները չհանելով, արմատականն էք միայն թողել, ապա թէ աւելորդ ձայները չհանէիք, ի՞նչ չափով պիտի գրէիք· կ'նշանակէ որ ամեն բան անհասկացողութեամբ և ըստ քմայց էք գրել, և ոչ Եւրոպական ձայնագրութեան մէջ կարծեցեալ զարգացած կատարեալ համոզմունդ է թոյլ տուել գրելու· Ի հարկէ սահմանի պարտքն է միշտ պարտակել մի սուտ, երբ ակներև տեսնումէ նորանից վտանգ, այսպէս և Դուք, երբ ձեզանից հարցնէ մի Եւրոպացի ձայնագրագէտ, թէ ինչո՞ւ սխալ են երգերիդ ձայները, կարկատուն ստերով պիտի հաւատացնէք թէ, Հայկականի կանոնը այդպէս է պահանջում, սխալ չէ· նոյնպէս և Հայ ձայնագրագէտին պիտի ասէք՝ Եւրոպականին հետևելով եմ գրել· Երկու արհեստով շաղախուած եղբայր, ուժից վեր բան բռնելը առողջութեան վնաս է, մի՞թէ չէք լսել բժիշկներից·

Երգարանիդ մէջ եղած երգերը ընդ ամենը 50 հատ լինելով, նոցա ուսուցանելու ժամանակամիջոցը չորս տարի էք որոշել· ուրեմն եթէ 100 երգ լինէր, պիտի որոշէիք 8 տարի· սակաւութեամբ ամբողջ ձայնագրութիւնը քանի՛ տարի աւարտել տալուդ կարգադրութեան· Եւ ի՞նչ զարմանալի բան, գիւղացի անգրագէտ մանուկը բարիկենդանների ազատ օրերը 10—ից աւելի բերանացի երգ է սովորում, իսկ դպրոցում մշտապէս պարապող մանուկը, ամբողջ տարին $12^1/_2$ երգ պիտի սովորէ· ո՞վ է ասում թէ եզնիկ քահանային ֆլեյտ չգիտէ· իրաւ որ ժժուարանութեամբ մի երգ ցոյց տալ՝ որ չորս տարուայ ընթացքում աշակերտը չսովորէ, ինչպէս խնդրել էք այդ հարցին բացատական պատասխան չտալ, ներեցէք·

Գրումէք, իբր երգարանիդ Աղօթքներ և Ցաւելուած վերնագրերով մասերին չեմ հաւանել, և թէ կուսակրօն լինելով, աւելի յարմար պիտի պատէի Աղօթքներիդ փոխարէն դնել Աչօք անճառ և նոքասպէնեալ շարականները· իսկ Ցաւելուածով, արգելել մանկան իր խաղեր խաղալուց· որով և մեծ զարմանքով մանկավարժութեան հետ ծանօթութիւն չունենալս էք ցոյց տալիս· Նախ՝ երգարանդ քննած ժամանակ, երբէք ակնարկութիւն չեմ արել բառերի վերայ, այս լաւ է, միւսը վատ է, խորհրդնելով, գիտենալով որ նոքա ձեր հնդինակածը չեն, այլ այնպիսի ուսման գրքոյ շարժող հեղինակ անձանց աշխատութեան արդասիք, որոց երախտագէտ հոգւով պատուելու պարտական ենք միշտ ես և դուք· Ուստի իմ չհաւանելս միայն եղել է նոցա բառերի իմաստին ընդդէմ ունեցած անբնական և անախորժ եղանակ կամ ձայները, և ոչ բառերը· օրինակով հասկացնեմ· կարելի՞ է Ջատկի Աչօք յոչեաս շարականի վերայ դնել մեր

ժողովրդական լեզվին մեկի ձայնը, ոչ ապաքեն իւրաքանչիւր դրուածք իրեն մտքին յարմար եղանակ պիտի ունենայ. իսկ դուք չհասկանալով այս արել էք, և ինձ մեղադրուելիք թէ, եղանակների ընտրութեան հետ էլ ծանօթ չեմ։ Երկրորդ, եթէ առաջարկի էլ վերյզրեալ Աղօթքների տեղ դնել Այսօր յաջո՞ւ և նոքասպեղծեալը, միթէ քո քնարած, Աստուծոյ բարկութիւնը քան զթութիւնը շարժող աղօթքներից անպիտան պիտի լինէին. սորանից երևում որ, դուք էլ հակառակ ձեր կամքեան և աստիճանի, Աստուածպաշտութեան հետ ծանօթ չէք։ Իսկ ինչ վերաբերում, թէ Ցաւելուածով կամեցել եմ արգելել մանկան խաղերը խաղալուց, այդ կարգադրութիւնը կանեի նոյն իսկ ձեզ համար . . . ։

Ասիայի երաժիշտների մէջ ընդունուած է առհասարակ, երբ մի երգիչ երգ է երգում միւս ընկերը անմիջապէս ձայն (բէմ) է պահում։ և այս նորա համար, թէ ընկերին շնչահատութեան միջոց օգնած լինի, և թէ, որ աւելի հաւանական է, երգին բուն իսկ համեղութիւն և ներդաշնակութիւն տայ։ Սոյն այս ձևը աւելի զեղեցիկ կանոնաւորուած տեսնում ենք և Եւրոպական երգերի մէջ, երբ խմբովին են երգում. օրինակ, մի երգ, երբ բազմութեամբ հարկաւորվում երգել, երկու հոգի միատեղ կանգնած ըստ պահանջման կանոնի և արուեստին՝ երկ վայր վեր երօ՛ օ՛ օ՛ են անում, երկրը նրանց հակառակ բարձր և սուր ձայնով է՛ է՛ է՛ են անում. իսկ յորսը, նոցա երգից յատկացած բաժնին առանց խառնուելու, շարունակութեամբ բառերով միասին երգելը, և պատճառն ի՞նչ է՝ որ այսպէս են անում. եթէ ոչ երգուած երգը աւելի նպատակ աւելի զմայլեցուցիչ կերպարանք ստանայ. ուրեմն դարմանալու ի՞նչ հարկ կայ ձեզ, երգարանիդ երկրորդ և երրորդ մասերի երգերի համար յիշած այս խօսքերիս վերայ թէ, չէ՛ շաբա՛թ ցոյց տալով կամեցել էք երգերին ներդաշնակութեան օգի տալ. բայց իրաւ ցաւալին այս է՝ որ նոյն ներդաշնակութիւն ստացող երգերից չեն ձեր ընտրածը, այլ թէ ոչ չէ՛ շաբա՛թ գործ է գրվում ոչ միայն մարդ շաղաքորթելու և խաբելու մէջ, ոչ միայն իւր սուտը ճշմարտութիւն ձևացնելու մէջ, այլև երգերի մէջ. որոց և դուք անխտիր գործ էք դրել վերյզրեալ հատուածներում. և չէք հասկացել թէ՝ ձեւ շարժումը երգի բուն իսկ համեմիչ աղն է։

Ինձ թուում թէ հայկական եղանակների քաղցրութիւնը, դեռ ևս զգացած չէք, և այս նկատումից նորանից, որ մի քանի երկրորդ ձայն երգերի ձայնաստիճանը փոխելով, միջից ձայնի կտորներ հանելով և վերջապէս խորթ ու բորդ կարկատելով եւրոպականացրել էք. Եւրոպա՝ ինչ երջանիկ աշխարհ նա, դարիս տգէտն անգամ անձկանօք քո անունն է յիշում, ծածկելով իրեն քո իմաստութեան վերարկուով. Պատուական եղբայր, որ և իցէ մի ազգի անհատ հարկը պահանջած միջոց նախանձախնդիր է միշտ իւր նախնական սովորութիւններին և ծէսերին ևլն, ևլն. իսկ դուք ինչո՞ւ մեր հայկական սքանչելի շարականներից ծննուած երգեր և խաղեր Եւրոպացւոց էք ընծայում. այն ևս այնպիսի

երգեր, որոց եթէ երգելու լինեիք մի Հայ աղա՛չէ մօտ, նա իսկոյն իւր դիտեցած խաղերի մէկին կնմանացնէր անշուշտ, և իմ դուցա համար պարզապէս երկրորդ ձայն են ասելը կճշդրտէր, որի վերայ բարձրաձայն ծիծաղացել էիք։ Ուրեմն ձեր կարծիքով Հայերը բնաւ սեպհական եղանակ չունին. ուրեմն և մեր մեծագործ Հայրապետի շնորհիւ սովորած ձայնագրութիւնը միայն ձեռնտու պիտի լինի այսուհետև շարականներ միմեանցից որոշելու և գրելու մէջ, իսկ երգեր ոչ բնաւ։ Ահա նոր հնարագիտութիւն, որ լայս կընծայէ Եղնիկ քահանային եղանակների մասին խօսելով շատ ճշմարիտ էք ասել, այլ է Եւրոպական, այլ է Հայկականն. և ես ցորան համաձայն եմ. բայց դուք հասկանալու չափ, գործով հակառակն էք արել։

Երգեր ձայնագրելու համար ասումէք. «ամենայն ձայնից կարելի է սկսել, նայելով մարդոց ձայներին, թէ ո՛վ է երգում»։ ուրեմն եթէ երգը երգում մանուկը, ուրիշ ձայնանիշներով պիտի գրել. եթէ խուռպտ ծերունին՝ ուրիշ, եթէ երիտասարդը՝ ուրիշ. ափսո՜ս որ կանանց ձա համապատասխան յատուկ ձայնանիշեր չէք որոշել։ Այսպիսի մի կանոն Հայերը չունենալուց զատ, չեմ կարծում որ Եւրոպացիք էլ ունենան, և եթէ անհրաժեշտ էր սորա ունենալը, անշուշտ կամ երգարանիդ յատուկ թաւանի մէջ կաւելացնեիք կամ լա-ներով հաստացրած Դասագրքիդ մէջ, որ չէք արել։

Վերջացնելով յօդուածս, դարձեալ խորհուրդ կտամ այսպիսի դէպքերում դիմել միշտ-ձեզանից և ինձանից հմուտ ձայնագրագէտներին, առանց վշտանալոյ և առանց ինքնահաւանութեան, որովհետև մի փոքրիկ սխալն անգամ ոչնչացնում ամբողջ աշխատութեան անունը։

Սահակ Պարխաճ.

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ.

Աստրախանայ Հայոց Եկեղեցւոյ Ջափաբերական մատեաններից երևում են՝ որ ամբողջ 1880 թուականի ընթացքում եղել են ծնունդք արուց 64. իգաց 64. վախճանք արուց 82, իգաց 79. այս երկուց սեռից վախճաններից 29ը թողախատութեան են զոհուել. և պակաք 29. այս ցուցակի մէջ տեսնում՝ որ երկուց սեռից վախճանը երկուց սեռից ծնունդից 33 թուով աւելի է, ուրեմն Աստրախանայ Հայ բնակչաց թիւը 1880 թուականին 33 թուով պակասել է, և այս Աստրախանցի Հայերի նուազանալը վաղուց է արդէն՝ որ ջափաբերական մատեանները իւրաքանչիւր տարի յայտնում են մեզ. զարմանալի՜ երևոյթ. վիճակագրական տեղեկութիւններից ակնյայտնի երևում են՝ որ շատ քաղաքներում Հայ բնակչաց թիւը հետզհետէ յաւելանում է, իսկ Աստրախանում պակասում, Աստրախա-

նայ Հայ բնակչաց այս զգալի նուազութիւնը՝ մեր մէջ մի հետաքրքրական հարց է ծնեցնում՝ ի նկատի ունենալով պակաց Թուի 30 ից չբարձրանալը շարունակ շատ տարիներ Աստրախանու մէջ, մինչդեռ Աստրախանու վիճակային հայաբնակ բազմամարդ քաղաքներումը իւրաքանչիւր տարի 50—60ից պակաս պակաս չէ կատարուում՝ վասնորոյ հասնում ենք հետևեալ եզրակացութեանը՝ որ բուն և ամենազօրաւոր պատճառը այս տխուր իրողութեան՝ է Աստրախանայ Հայ նիւթատարփագ զարտուղի կենցաղավարութիւնը՝ որոնցից շատերը ապրում են սառն աշխարբերութեան մէջ դէպի ազգային դպացումները՝ շատերի մէջ հանգած է ամուսնութեան փափագը՝ շատերը հրաժարվումեն ամուսնանալու կանանց շռայլութիւնը և մեծամեծ պահանջները պատճառ բերելով՝ թէպէտ երիտասարդները իրաւունք ունին իգական սեռի ընդհանրացած շռայլութիւնը աչաց առաջև ունենալով՝ հետանալ ամուսնանալուց՝ բայց պէտք է ի նկատի ունենան և մտածեն պատկառանօք՝ որ իւրեանց բոլոր վաստակները և թարմ ոյժերը թիւր ճանապարհաւ ոչընչացնում են անպսակ կեանքի մէջ՝ թաղամեցնում են իւրեանց ծաղիկ հասակը և շատերը երեսուն տարիքը չլրացրած՝ մնում են սև հողի մէջ. այսպիսի երիտասարդներին՝ որոնք իւրեանց յոռի կենցաղավարութեամբ ամօթ և նախատինք են բերում մարդկութեան և սարսափելի պատմութիւն՝ իւրեանց ծնողաց, քաղաքիս մէջ ամեն քայլում համարեա կարելի է պատահել. Աստրախանի մէջ մի ամբողջ տարում եթէ 30 պակ է կատարվում՝ ամուսնացողներից ոմանք 40 կամ 50 տարիքը անցկացրած անձինքներ են՝ ոմանք օտար քաղաքացիներ՝ և մեծ մասը ոչ թէ օրիորդների՝ այլ նոցա բերած հազարաւոր դրամարների և մեծագին օժիտների հետև են պակուսած. Աստրախանու Հայոց այժմեան աննախանձելի դրութիւնը գուշակումէ՝ որ մի դար չանցած՝ Հայութեան հետքն անգամ չպէտք, երևի, բայց մի և նոյն ժամանակ պէտք խոստովանել, որ ժողովրդի սառն և վնասակար ուղղութեանը մեք հոգևորականներս անտարբերութեամբ ենք նայում, և նոյն պարմանը՝ որը թերևս կարող էր փոքր ինչ սթափեցնել նոցա այդ կարստաբեր թմրութիւնից՝ ի գործ չենք դնում՝ որ է ժամանակիս յարմար քարոզը, յորդորմունքը և խրատը, որովհետև քաղաքիս եկեղեցւոց մէջ ամբողջ տարուայ ընթացքում միայն մեծի պահոց մի քանի կիրակի օրերը են ասվում քարոզ, սակայն ի՞նչ ազդեցութիւն կարող է արդեօք ունենալ մի•օտարատեր և նորատեր ժողովրդի վերայ մի քանի քարոզը՝ մի՞թէ քարոզը պահոց կերակուր է՝ որ միայն մեծի պահոց օրերն են ասվում, ուստի ցանկալի էր Հոգևոր Իշխանութեան քաղցր ուշադրութիւնը գրաւել այս իրողութեան վերայ, որպէսզի կարգադրուէր՝ որ Հոգևոր Հայրերը իրեև խոստովանահայր ժողովրդեան և տեղեակ նորա սրտին, ամենայն Հանդիսաւոր և տէրունական օրերին խօսքին եկեղեցւոյ մէջ ժողովրդեան հետ, մանելով նորա սրտի ու հոգւոյ խորքերը և ոչ թէ կրպակի, որից նա բաւական խրտնում՝ խօսքին չէ թէ երկրորդական, այլ նորա առաջին և ամենակարևոր պարտա-

սրութեան վերայ, որով գուցէ առաջը կառնուէր ժողովրդեան այդ սղալի սառնութեանը և կչերմանար նա ջէպի ազգասիրութիւն, ընկերասիրութիւն, կրօնասիրութիւն, և որ առաւելն է՝ պարզասիրութիւն, որովհետև շատ կենցաղավարութիւնը թէ արանց և թէ կանանց՝ քարուքանդ է անում ազգայնութիւնը և անբաւականութեան առիթ է լինում շատ վերջաստանների մէջ։

Յովհէ. Ա–ած Խահանայ Ռ–անկիէանց

ՆԱՄԱԿ ԿՈՂԲԻՑ.

Հայաստանեայց գիւղօրէից մէջ ևս բարեբաղդաբար օր ըստ օրէ ընդարձակվում է մեր Հայ ազգի մտաւոր զարգացման ասպիճանը՝ ինչպէս տեսնվում է այս մեր արդի սիրագործ Կաթուղիկոսի և լուսաւոր գարուս շնորհիւ։

Վասն զի ամեն բարեհաճաբար խորհող մարդը ինձ հետ շատ կհամոզվի այս ասածիս, որ բաց ի քաղաքացիները խաւարի ու տգիտութեան մէջ յամառեալ գիւղացին ևս սկսել է աչք բանալ և իմանալ իւր ազգի գովելի յատկութիւնները և զգալ իւր անհրաժեշտ պէտքերը՝ ինչպէս դպրոց, ուսուցիչ, ուսում, քարոզ, ներպաշնակ երգեցողութիւն եկեղեցում. թեմական վերատեսուչ՝ որն որ ծխական դպրոցների թիւը բազմացնելով հանգերձ, նոցա ներկայ և ապագայ վիճակը բարւոքելու, եկամուտի նոր աղբիւրներ դանելու փոյթը ձեռքէ չի թողուր, և ազգային հանգէս . . . որը այս առաջին անգամ՝ տեղի ունեցաւ Կողբ երբեմն մեծանուն գիւղում՝ Ս. Վարդանեանների տարեդարձի առթիւ։

Այդ օրը Ս. Պատարագից ղկնի քահանայական դասը զգեստաւորուած՝ ժողովրդի խուռն բազմութեամբ դիմեց նորաշէն դպրոցը, որտեղ աշակերտք կարգացին տօնի վերաբերեալ ճառեր, երգեցին նոյնպէս պատշաճաւոր երգեր, որը գրաւեց ժողովրդի համակրութիւնն ու շնորհակալութիւնը։

Բայց սորա հետ մոռ թողլ տրուի ինձ յիշել տեղւոյն պատուելի հոգաբարձութեան անընդհատ աշխատանքն ու եռանդը ևս։ Սոքա հանդիսին աւելի շքեղութիւն տալու համար, մի մասնաւոր սեղան ևս պատրաստեցին այցելուների համար, որտեղ յօգուտ դպրոցի նոցանից մի քանիսը նուիրեցին մօտ 25 ռուբլի փող։

*Ի նկատի ունենալով ինչպէս նորա գումարը, այսպէս և նորա չնչին ծախքը, ապա զարմանք չէ. ասել, որ մեր Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսի և ամեն գործող անձանց յատուկ տարած լուսաւորութեան և բարոյականութեան գործն այսպիսի աղքատիկ ժողովրդի մէջ եղածը դեռ ևս շատ է։ *)*

ՊՕՂՈՍ Ց. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

(*) *Ցաւումենք, որ տեղի անձկութեան պատճառով չկարողացանք տալ այդ հանդիսի մէջ կարդացուած ճառերը։* Ս. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵՂԵԼՈՒԱՑ.

Քրիստոսասէր հղեալք, մեր Փրկչի սուրբ յարուԹիւնը արժանաւորապէս ոճնելու համար Թող այս աւետաբեր հրեշտակի կենսատու ձայնը յարուցանէ և մեզ մեր բարոյական մեռելուԹիւնից, յարուցանելով մեր սրտերի մէջ կենդանի հաւատ և յոյս դէպի մեր վերջին աւուր յարուԹիւնը։ Թող խորտակուին և Թօթափուին այն ամէն մեղքերի կապանքները, սրտերով կապուած, կաշկանդուած են մեր սրտերն ու հոգիքը։ ԱրդարուԹիւնն ու ճշմարտուԹիւնը, սրտերով յաղԹեց և ամէնԹապատ արեց մեր յարուցեալ Փրկիչը խաւարի իշխանին, Թող լինին մեր ամէն գործերի առաջնորդն ու ուղեցոյցը։ Յարուցեալ Փրկչի սիրով վառենք մեր հոգիքը և նորա բազմատեսակ պատուիներով — առաքինուԹիւններով զարդարենք մեր կեանքը, որ մեր վերջին աւուր յարուԹիւնը ևս լինի փառքով և յաղԹանակով։

***

Հրապարակական շնորհակալուԹիւն Մոսկուայի բարեկրօն ՅարուԹիւն քահանայ Պօպովեանցին, որ Մայր Աթոռոյս Ս. Գէորգեան Ճեմարանի Մատենադարանին ընծայեց իր աշխատասիրած «Պարտքէն նոր կրակարի» օգտակար գասագրքից Հատ և հինգ օրինակ։ Յանկալի էր, որ բարեկրօն քահանայիս օրինակին հետևէին և ամենայն հեղինակներ։

***

Ակնյախայի քահանանիրէն բարեկրօն Մարտիրոս քահանայ Մեծատունեանց ցանկանալով ըստ կարեաց մասնակցել Հայ ազգային լուսաւորուԹեան և դաստիարակուԹեան գործին ուխտեց ներկայ Թուականից սկսեալ մինչև իւր մահը նուիրել յօգուտ Մայր Աթոռոյս Ս. Գէորգեան Ճեմարանի ի տարին Հատ և հինգ ռուբլի, որով և արժանացաւ Ազգիս Վեհափառ Հայրապետի սուրբ օրհնուԹեանը։ Երանի՛ Թէ ամէն մի հայ իւր ձեռքից նկատ օգնուԹիւնը ինքնայորդոր սիրէր մատուցանել այս գիտուԹեան հայկական հերրոնական տաճարին, որից միայն անշուշտ պէտք ծնանին Ազգիս բարոյական յառաջադիմուԹեան ուժերը և կրկին պաշտօնեաներ։

Մոսկուայի բարեկ. Ճակովը Աւագ քահանայն Սուրբ Հոգեհանց պաշտօնական յայտարարեալ ուղարկելով Ս. Սինոդին յօգուտ սովեալց Մոսկու, արձակ հայերէն նուիրատուաց ցուցակը, խնդրուած հրատարակել զայն Արարատի էջերուն, որ և հրատարակուածնք գովելով թէ բարեկ. հօր և թէ մեր Մոսկուայեցի Ազգայնոց ազգասիրական և մարդասիրական եռանդն ու ջանքը։

Յովհաննէս Ե. Ալէքսանդր Յովհաննեանց	1500
Գէորգ Լիանոզեանց	300
Յակոբ Խլըթճեանց	200
Բաղդասար Մարգարեանց	200
Գրիգոր Ճգնաւորեան	200
Յովհան Մէհրաբեան	200
Մարգիս Թումանեան	200
Մահտեսիս Պարսամեան	100
Մատթէոս Շամխարեանց	400
Լեւոն Կաչանեան	200
Յովակիմ Պարանոսեան	100
Մարգիս Եղեանց	100
Նիկողայոս Տիլմանեանց	25
Սմբատ Շահազիզեանց	20
Մարգիս Խալաթեան	50
Յոհաննէս Սալամբէկեան	25
Լազար Լազարեանց	20
Յակոբ Վարդապետեանց	100
Մարգիս Ղազարոսեանց	6
Սիմէոն Մուրատեանց	5
Հայրապետ Դուրկարեանց	20
Ալէքսանդր Զուխաճեանց	5
Յովսէփ Գինեբկեանց	5
Աղաջան Ղուկասեանց	50
Գեւորս Քաճանեանց	5
Մոտիան Թիմուրեանց	10
Նիկողայոս Գինոբկեանց	5
Յովհաննէս Փանիրեանց	19
Գուլլուեանց	5
Բասիլեանց	5
Յովսեփեանց	5
Յարութիւն Վոնտուրալեանց	50
Մարգիս Կիրակոսեանց	25
Մարգիս Ջուլումեանց	300
Նիկողայոս Փիլիպոսեանց	200
Յովսէփ Խարբերեան	10
Յովհաննէս Թելէթեանց	3
Միքայէլ Էմին	10
Մովսէս Խալաֆեանց	15
Եղբարք Յամհարեանց	200
Լ. Ս. Պօղոսկով	100
Աբշակ Հէդոբեանց	100
Ս. Ա. Բէբերեան	25
Ս. Ա. Բլիսէյ	25
Ի. Վ. Իւնքեր	100
Անյայտ ոմն	50
Անյայտ ոմն	10
Գրիգոր Զուլաթեանց	5
Անյայտ ոմն	10
Անյայտ ոմն	3
Անդրէաս Միրզաբէկեանց	25
Տիրան Չքնաղէր	100
Գրիգոր Մատինեանց	5
Ալէքսանդր Գաբիկեանց	5
Մինասեանց	5
Սերովբէ Շաբաղալեանց	25
Աբէել Ամիրազեանց	5
Բաղդասար Բաբիկեանց	2
Երեմիայ Մահակեանց	15
Բաղդասար Պօղոսեանց	10
Մատինոս Զաք. Մուրչենեանց	10
Ներսէս Ներսիսեանց	10
Տիկին Ն. Բանանեանց	5
Յ. Ղամբարեանց	5
Տիկ. Նունէ Զարիկարեանց	25
Միքայէլ Մատինեանց	100
Ն. Կարղակեն	20
Անյայտ ոմն	2
Շալիք	100
Մօսէ	100
Ոմն	25
Մալիբին	100
Եղբ. Խլուսով	100
Անյայտ ոմն	3
Ոմն	3
Բարիսով	100
Ս. Կարղինկեն	100
Ա. Կարղինկեն	100
Սարգիս Մելիքեանց	10
Կարիճնիկով	150
Լ. Բարանով	100
Պասալարեանց	4
Յովհ. Թարասեանց	2
Յովսէփ Իւանով	3
Մովսէս Սահաքեկեանց	25
Վ. Եակավլեվ	200
Մարտիրոս Խոշտիան Սալմասեցի	5
Գէորգ Քանանեանց	25
Յակոբ Ա. Բահ. Սուրենեանց.	20
Ալէքսեև և աշակերտք Հիմարանի Լազարեանց	109
Արդիւնք դասագրաց երաժշտական գիշերից ձեռամբ Ա.-Ք. Սուրէն.	755
	8135

Ընդամէնն ոչ հազար հարիւր երեսուն և հինգ րուբլի . . . .

Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյս միաբաններէն Հոգեզգօն

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸՐԱՄԵԼԻՔԵԱՆՑ

անցեալ Մարտ ամսոյ 14*ին՝ երկարատեւ անբուժելի հիւանդութիւնից յետոյ՝ իւր երկրաւոր կեանքը կնքեց Երեւան քաղաքում, ուր վ. հսկիչ Հայրապետի հրամանաւ գնացած էր օգափոխութեան համար։*

Հանգուցեալը 1862 *թուականում կուսակրօն հոգեւորականութեան կարգը մտնելով,* 1864 *թուականում Ս. Աստղիկի վանքում ձեռնադրեցաւ կուսակրօն քահանայ եւ ընկալաւ վեղար, երկար միջոց կատարեց Նոր—Նախիջեւանի եւ Խրիմու Ս. Խաչի համանուն վանքերում վանահայրութեան պաշտօններ· երկու տարուայ չափ եւս վարեց Բեսարաբիոյ եւ Ն. Նախիջեւանի թեմի վիճակային Առենի նախանդամութեան պաշտօնը։* 1876 *թուականից սկսեալ մինչեւ իւր մահը բարեջանութեամբ կատարեց Մայր Աթոռոյս վանքական—տնտեսական կառավարութեան անդամութեան բազմազբաղ պաշտօնը, որով արժանացաւ Ազգիս վեհափառ Հայրապետի քաղցր ուշադրութեանը եւ* 1879 *թուականում եպիսկոպոսական բարձր աստիճանին։*

Ըստ հրամանի վեհափառ Հայրապետի Ազգիս արժանաւոր հանգիստու եւ յուղարկաւորութեամբ Մարտի 17*ին հանգուցեալ մարմինը ամփոփեցաւ Երեւանայ Ս. Սարգիս եկեղեցւոյ սրահում։*

Հանգուցեալ հոգւոյն հանգիստ եւ երկնից տուրք արքայութիւն կմաղթեմք Ամենաբարձրեալից։